


ՊԱՏԻ ԹԵՐԹԵՐԻ ԽՄԲՈԳԻՐՆԵՐԻ ՅԵՎ ԲՈՆԴՅՈՒՂԹԸԿԻՑՆԵՐԻ
Դ Ա Ս Ը Ն Թ Ա Ց Ն Ե

Թ. 8019. Ա. Բ Ի Ն Ա Ա

ԱՃԻԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ
Դ Ա Ս Տ Ի Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը
Յ Ե Վ
ՊԱՏԻ ԹԵՐԹԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ



Ադրբեյջանի լրագրա-ժուռնալային միտցյալ հրատարակչություն

J MAR 2010

ՊԱՏԻ ԹԵՐԹԵՐԻ ԽՄԲՈԳԻՐՆԵՐԻ ՅԵՎ ԲԱՆԳՑՈՒՂԹՈՎԱԿԻՑՆԵՐԻ
Դ Ա Ս Լ Ն Թ Ա Յ Ն Ե Ր

57
S-95

Բ. ՏՈՒԳԱՐԻՆ ՌԱ

ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ
Դ Ա Ս Ի Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը
ՅԵՎ
ՊԱՏԻ ԹԵՐԹԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ



«ԿՈՄՈՒՆԻՍՏ» ԱՐՁԵՐԻ ԽՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Բագու—1940

27 FEB 2014

99.73

10691

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵԶ

Նոր իրադրություն—նոր խնդիրներ	+	+	+	+	6
Սոցիալիստական հասարակությանն արժանի աշխատանքի արտադրողականության համար	+	+	+	+	15
Գայքարել մարդկանց գիտակցության մեջ կազմակերպմի մնացուկները հաղթահարելու համար	+	+	+	+	24
Արթուն պահպանել և ամրապնդել սոցիալիստական սեփա- կանությունը	+	+	+	+	35
Կուլտուրական հեղափոխության նոր հաջողությունների համար	+	+	+	+	39
Դաստիարակել խորհրդային հայրենասիրության զգաց- մունքը	+	+	+	+	46
Պրոպագանդա անել Ստալինյան Սահմանադրության դա- դափառները	+	+	+	+	56

3027
40

Տես. Խմբ. Ռ. ԱՐՁԱՆՅՈՒՆ

Сдано в производство 19/1-40 г. Разрешено к печати 3/VIII-40 г.
Кодекс № 18.512 Колич. печ. листов 4 1/4

Главлит № 5832. Ст. 364. А-5. Типография „III Интернационал“,
Баку, ул. Саратовца-Ефимова, 29. Заказ № 1633. Тираж 700.

ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԿԱՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՏԱՑՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՊԱՏԻ ԹԵՐԹԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Մեր յերկրի հասարակական՝ քաղաքական կյանքում պատի
թերթը հաստատում և պատվավոր տեղ է գրավել: Փաբրիկանե-
րում և գործարաններում, շախմերում և հանքերում, յերկաթու-
զիներում, սովորություններում, կոլլուգներում, մեքենատրակտորա-
յին կայաններում, պետական, կոռպերատիվային հիմնարկու-
թյուններում, գալուցներում,—ամեն տեղ պատի թերթը են լույս
տեսնում: Դրանք նպաստում են այդ ձեռնարկությունների ու
հիմնարկությունների աշխատանքի բարելավմանը, ոգնում են աշ-
խատավորներին՝ լենինի՝ Ստալինի բոլշևիկյան կուսակցության
ղեկավարությամբ կառուցել նոր, ուրախալի կյանք: Պատի թերթը
քաղաքական մեծ ուժ է, բոլշևիկյան մամուլի կարեվոր ողակն է:

Ամենահամեստ հաշիվներով, Խորհրդային Միությունում
ԽՍՀՄ ժողովուրդների բոլոր լեզուներով լույս է տեսնում ավելի
քան 750 հազար պատի թերթ: Այսպես, Կուչիկի մարզում
լույս է տեսնում 7.500 պատի թերթ, Կրասնոդարի յերկրամա-
տում — 10.780, Ռյազանի մարզում — 6.640, Թաթարական
Անջում — 10.900: Մոսկվայի Ստալինի անվան ավտոմոբիլային
գործարանում լույս է ընծայվում ավելի քան 300 պատի թերթ:
Կրասնոդարի յերկրամասի Տիմաշևի շրջանի «Պոլիտոտեկնից»
գուղատնտեսական արտելում հրատարակվում է 16 պատի
թերթ: Ընդհանուր-Կոլլուգային «Զա լրսովի ուրաժայ» թերթը
լույս է տեսնում ամեն հնդորյակ: 1939 թվականի առաջին կեզ

ամսում կոլխոզում ընդամենը լույս ե տեսել պատի թերթերի
157 համար:

Կորոնեթի մարդի Բորբառովերսկի շրջանի XVIII կուսամա-
գումարի անվան կոլխոզում հրատարակվում ե ընդհանուր -
կոլխոզային, գրական, բրիգադային 12 պատի թերթ:

Սոցիալիստական շինարարության մեջ պատի թերթերը մեծ
դեր են խաղում: Նրանք բոլշևիկյան կուսակցության և խորհր-
դային ամբողջ ժողովրդի ակտիվ ոգնականներն են յեղել առաջին
և յերկրորդ ստալինյան հնդամյակների պլանների կատարման
համար մղած պայքարում: Նրանք նպաստել են սոցիալիստական
ինդուստրիալի հաջող շինարարությանը, աշխատանքի արտադր-
ուողականության հետագա աճմանը և սոցիալիստական սեփա-
կանության հետագա ամրապնդմանը: Նրանք նույնպիսի ակտիվ
մարտնչողներ են նաև ստալինյան յերրորդ հնդամյակի պլանի
հաջող կատարման համար մղվող պայքարում:

241 պատի թերթ, նրանց խմբագիրները և լավագույն գլուխ-
թղթակիցներն արժանացել են 1939 թվականի Համամիութենա-
կան գյուղատնտեսական ցուցահանդեսին, մասնակցելու մեծ
պատվին: Այդ իրավունքը նրանք նվաճել են կոլխոզների հա-
րստությունների բազմապատկման, սոցիալիստական դաշտերի
բերքատվության բարձրացման և հանրային անասնաբուժության
հետագա զարգացման համար մղվող անդադրում պայքարով:

Զելյուսկինյան հերոսական եպոպեայի որերին դաժան հյուսիսի
սառուցների վրա մնացած մի բռնան խորհրդային մարդիկ հը-
րատարակել են «Զենք հանձնվի» պատի թերթը: Այն որերին,
յերբ մարտեր ելին տեղի ունեցել ետասան լճի մոտ, եալիսին-Գոլի
մոտ, Արեվմայան Բելոռուսիայի և Արեվմայան Ռմկաբինայի
աշխատավորներին պանական ձնշումից ազատելու որերին,
ԽՍՀՄ հյուսիս-արեվմայան սահմանների անվտանգության ապա-
հովման համար մղված պանծալի մարտերի որերին, Գրոնտային
պայմաններում լույս են ընծայվել պատի թերթեր, վորոնք սո-
ցիալիստական հայրենիքի պանծալի պատրիոտներին կոչ ելին
անում հերոսական նոր սիրապործությունների:

Ընկ. Սովորակի ստորաբաժաննումում լույս եր տեսնում «Բո-
լեվոյ լիստոկ» թերթը: Ամեն մի թղթակցությամբ, յուրաքանչյուր

ոռողով թերթն ոգնում եր իր ստորաբաժանմանը՝ արագորեն և ա-
վելի հաջող կատարել հրամանատարության կողմից նրա վրա
դրված խնդիրները: Թերթը կենտրոնական տեղ եր հատկացնում
դասակաների, առանձին կարմիրբանակայիշների միջև տեղի ունե-
ցող մրցությանը և ցուցադրում կրակի ամենաբարձր տեմպ տվող ու
գերդիպով խփող առաջավորներին:

«Բոյեվոյ լիստոկ» թերթեր լույս են տեսնում Բանվորա-Գյու-
ղացիական Կարմիր Բանակի բոլոր ստորաբաժաննումներում: Այդ
թերթերը պատվով կատարում են իրենց պատվավոր խնդիրը՝
նպաստելով ԲԳԿԲ հզորության հետագա ամրացմանը:

Մամուլը մեր յերկրում—դա մասսաների կոլեկտիվ ագիտա-
տորը, կոլեկտիվ պրոպագանիֆստը և կոլեկտիվ կազմակերպի-
չըն ե՝ լենինի- Ստալինի բոլշևիկյան կուսակցության կողմից աշ-
խատավորների առջեկ գրված պատմական խնդիրների կատար-
ման համար պայքարելու գործում:

Պատի թերթերի խմբագիրները, խմբկուների անդամները և
ակտիվն աշխատում են ամենահոծ մասսաների խորքում, կոլ-
խոզներում, ցեխերում, բրիգաներում, ֆերմաներում, հիմնար-
կություններում—այնտեղ, ուր աղբյուրի պես հորդում ե խորհըր-
դային մարդկանց ստեղծագործական միտքը և անդուսպ յեռան-
գը:

Նրանք հնարավորություն ունեն ամեն որ դիտել և ուսումնա-
սիրել տեղի ունեցող յերկությներն ու դեպքերը և պատի թերթի
միջոցով ներգործել գրանց վրա: Նրանք ոժանդակում են նոր,
կոմունիստական հարաբերությունների զարգացմանն արտադրու-
թյան մեջ, կենցաղում: Միևնույն ժամանակ նրանք պալքար են
մղում հին, բուրժուական մնացորդների դեմ և ոգնում դրանց ա-
վելի արագ հաղթահարմանը:

Ներկա ժամանակ պատի մամուլի դերն ե'լ ավելի յէ աճել:
ֆաբրիկներում ու գործարաններում, կոլխոզներում ու սով-
խոզներում, տրանսպորտում, հիմնարկություններում հարյուր
հազարավոր պատի թերթեր, բանգյուղթղթակիցների միլիոնանց
բանակը պայքարում են մեր յերկրում սոցիալիզմի նոր հաղթա-
նակների համար, կոմունիստական հասարակության կառուցման
համար:

ՆՈՐ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ—ՆՈՐ ԽՆԴԻՌՆԵՐ

Վերշին տարիների ընթացքում մեր յերկրում խոշորագույն փոփոխություններ են տեղի ունեցել: Բոլշևիկյան կուսակցության XVIII համագումարը հաստատեց յերրորդ հնգամյա պահնը, վորի իրագործումը խոշոր քայլ կլինի դեպի կոմունիզմը տանող ճանապարհին: Այդ ամենը ստորին մամուկի առջև, բանգյուղթղթակիցների բուզմամիլիոն բանակի առյև նոր աշտամի անատու և պատվավոր խնդիրներ ե դնում:

Վոչ շատ առաջ՝ տասներկու տարի սրանից առաջ, Խորհրդային Միությունն ուներ թույլ զարգացած և տեխնիկական տեսակետից հետամնաց արդյունաբերություն: Գյուղական տնտեսությունների ովկիանոս եր ներկայացնում:

1928 թվականին ԽՍՀՄ բնակիչների միայն 22 տոկոսն եր ամբողջովին կապված սոցիալիստական տնտեսության հետ: Աշխատողկոմատի տվյալներով, 1930 թվականին մեզ մոտ յերկրում կար մոտ մեկ միլիոն գործազրություն նյութում մինչև մասսայական կոլեկտիվացումը յուրաքանչյուր 100 ծխին ընկնում եր 4-5 կուակային տնտեսություն, 8-10 ունենոր տնտեսություն, 40-50 միջակ և 35 շքավոր տնտեսություն:

Այն ժամանակից պատմական ամենակարծ ժամկետում մեր հայրենիքի անծայրածիր տարածություններում հսկայական փոփոխություններ են տեղի ունեցել: Հաջողությամբ իրագործված և ԽՍՀՄ ինդուստրացման պլանը: Ստեղծված և հզոր սև մետալուրգիա, վորը տալիս ե շուկուն և պողպատ, ստեղծված և տրամադրային, ավտոմոբիլային, ավիացիոն, քիմիական արդյունաբերություն, կարգավորված և ամենաբարդ գյուղատնտեսական

մեթենաների, ստանոկների, ելեկտրակայանների համար սարքավորման արտադրությունը: Այժմ մենք ունենք առաջավոր տեխնիկայով զինված պաշտպանական արդյունաբերություն, մենք ունենք ժողովրդական տնտեսության համար անհրաժեշտ արտադրության բոլոր ճյուղերը:

Արդյունաբերության զարագցման հետ մեկտեղ աճել են խորհրդային հիանալի կազմեր, վորոնք տիրապետել են տեխնիկային և առաջ են շարժում այն: Բոլշևիկյան կուսակցության զեկավարությամբ յերկիրը շարունակում է արդյունաբերության հետագա զարգացման ուժեղացրած աշխատանքը: Ստալինյան յերրորդ հնգամյակում գործի կցվեն հազարավոր նոր ձեռնարկություններ: Սկսված և աշխարհում մեծագույն կուրիշելվան հիգրոհանուլցի կառուցում՝ 3,2 միլիոն կիլովատ հզորությամբ, ստեղծվում է նավթային արդյունաբերության նոր կենտրոն—«Յերկրորդ Բագում»: Կառուցվում են նոր ելեկտրակայաններ, քիմիական գործարաններ, քարածմի հանքեր, կառուցվում են յերկաթուղիներ, հաջողությամբ յուրացվում և Հյուախային ծովային մեծ ուղին:

Փայլուն կերպով իրագործված և գյուղական տնտեսության կոլեկտիվացման ստալինյան պլանը: Ընկեր Ստալինի ղեկավարությամբ բոլշևիկյան կուսակցության կատարած հսկայական աշխատանքի շնորհիվ կոլխոզային կարգերը վերջնականացնե ամրապնդվել են: Սոցիալիստական գյուղական տնտեսությունը ստացել է հզոր տեխնիկական բազա—ավելի քան կես միլիոն հզոր տրակտոր, 165 հազար կոմբայն, ավելի քան 250 հազար ավտոմոբիլ: Մեքենա-տրակտորային կայանների թիվը հասել է 6,5 հազարի: Հայրենական արտադրության հիանալի մեքենաներ և ղեկավարում մեխանիկների, տրակտորիստների, կոմբայնավարների, շոգեբների մեկուկեսմիլիոնանոց բանակը: Աճել են գյուղական տնտեսության հարյուր հազարավոր փորձված կազմակերպիչներ: Արդեն 1938 թվականին մեր գյուղական տընտեսությունը մեկուկես անգամ ավելի արտադրանք է տվել, քան 1913 թվականին: Հաջողությամբ իրագործվում է տարեկան 8 միլիարդ փութ հացահատիկ արտադրելու վերաբերյալ ստալինյան լոգումնը:

Ստալինյան հնդամյակների հաղթանակների շնորհիվ
մեր յերկիրը դարձել ե հզոր սոցիալիստական տերություն։ Շա-
հագործվող դասակարգերը լիկվիդացիայի յեն յենթարկված։ Ա-
վարտված ե ժողովրդական տնտեսության տեխնիկական վերա-
կառուցումը։ ԽՍՀՄ դարձել ե առաջավոր, տնտեսապես անկար-
պետություն։ Ստեղծված ե սոցիալիստական եկոնոմիկա, վորո-
շգիտե ճգնաժամեր, գործազրկություն և աղքատություն։ Սոցիո-
լիզմը հիմնականում կառուցված է։ Արդեն յերկրորդ հնդամյա-
կի վերջին ԽՍՀՄ բնակչության հսկայական մեծամասնությու-
նը՝ 94 տոկոսը, զբաղված եր սոցիալիստական պետական և կոլ-
խոզային կոոպերատիվացին սեկտորում։ Մենատնտես գյուղացի-
ները և շկոռպերացված կուստարները կազմում են միայն մոտ
6 տոկոսը։

Աձել, ամենահաղթ մեծ ուժ ե դարձել Խորհրդացին Միու-
թյան ժողովուրդների բարոյական - քաղաքական միասնությու-
նը, ժողովուրդներ, վորոնք համախմբված են բոլշևիկյան կու-
ստակցության և մեծ առաջնորդ ընկեր Ստալինի շուրջը։ Յերկիրն
ստացել ե նոր Ստալինյան Սահմանադրություն, հաղթանակած
սոցիալիզմի և իսկական դեմոկրատիզմի սահմանադրությունը։

Խորհրդացին Միությունը մտել ե զարգացման նոր շրջանը,
«անդասակարգ սոցիալիստական հասարակության կառուցումն
ավարտելու և սոցիալիզմից աստիճանաբար կոմունիզմին անցնե-
լու շրջանը»։ Սոցիալիզմի հիմնական սկզբունքն ե «յուրաքան-
չութիւնց» ըստ նրա ընդունակությունների, յուրաքանչութիւն՝ ըստ
նրա աշխատանքի։ Մեր յերկրում այդ սկզբունքն իրավործված
է։ Լիկվիդացիայի յեն յենթարկված բոլոր պարագիտական դա-
սակարգերը — կալվածատերերը, կապիտալիստները, կովակները։
Խորհրդացին հասարակությունը բաղկացած ե բանվորներից։
գյուղացիներից, խորհրդացին ինտելիգենցիայից։ «ԽՍՀՄ աշխա-
տավորները ճնշող մասսայով անդասակարգ սոցիալիստական
հասարակության, կոմունիզմի ակտիվ և գիտակից կառուցողներն
են հանդիսանում»։ (Ընկ. Մոլոտովի գեկուցման առթիվ Համ-
կ(բ)կ ԽVIII համագումարի բանաձեկից):

Ավարտելով սոցիալիզմի կառուցումը, մեր յերկիրը բոլշև-
իկյան կուստակցության և ընկեր Ստալինի ղեկավարությամբ հա-
շողությամբ առաջ ե ընթանում դեպի կոմունիզմի շողուղուն-

դագաթները, յերբ հիմնական սկզբունքը՝ կլինի՝ «յուրաքանչյու-
րից ըստ նրա ընդունակությունների, յուրաքանչութիւն՝ ըստ նրա
կարիքների»։

Ընկեր Ստալինը կուսակցության XVIII համագումարում ա-
րագ իր զեկուցման մեջ նշել ե դեպի կոմունիստական հասարա-
կությունն առաջ շարժմելու ուղիները։ Նա ասել ե,

«Կուսակցության խնդիրները ներքին քաղաքականության բո-
նագավառում։

1. Ել ավելի ծավալել մեր արդյունաբերության վերելքը,
աշխատանքի արտադրողականության աճը, արտադրության տեխ-
նիկայի կատարելագործումն՝ այն հաշվով, վորպեսզի, այն բա-
նից հետո, յերբ արտադրության տեխնիկայի և արդյունաբերու-
թյան աճման տեմպերի բնագավառում արդեն առաջ ենք անցել
գլխավոր կապիտալիստական յերկրներից, — նրանցից առաջ
անցնենք նաև տնտեսապես մոտակա 10-15 տարվա ընթացքում։

2. Ել ավելի ծավալել մեր հողագործության և անասնաբու-
ծության վերելքն այն հաշվով, վորպեսզի մոտակա 3-4 տար-
վա ընթացքում հասնենք տարեկան 8 միլիարդ փութ հացահա-
տիկի արտադրության՝ հեկտարին 12-13 ցենտներ միջին բեր-
քատվությամբ, տեխնիկական կուլտուրաների արտադրությունը
միջին թվով ավելացնենք 30-35 տոկոսով, վոլշարների և խո-
զերի գլխաքանակն ավելացնենք կրկնակի շափով, խոշոր յեղ-
շերավոր անասունների գլխաքանակը — 40 տոկոսով, ձիերի
գլխաքանակը — 35 տոկոսով։

3. Ել ավելի շարունակել բարեկամել բանվորների, գյուղա-
ցիների, ինտելիգենցիայի նյութական և կուլտուրական դրու-
թյունը։

4. Անշեղորեն կենսագործել մեր սոցիալիստական Սահմա-
նագրությունը, մինչև վերջը կենսագործել յերկրի քաղաքական
կյանքի զեմոկրատացումը, ամրապնդել խորհրդացին հասարա-
կության բարոյական-քաղաքական միասնությունը և բանվորնե-
րի, գյուղացիների, ինտելիգենցիայի բարեկամական աշխա-
տագությունը, ըստամենայնի ամրապնդել ԽՍՀՄ ժողովուրդ-
ների բարեկամությունը, ծավալել ու մշակել խորհրդացին հայ-
րենասիրությունը։

5. Զմոռանալ կապիտալիստական շրջապատման մասին, Հիշել, վոր ոտարերկրյա հետախուզությունը մեր յերկիրը կուղարկի լրտեսներ, մարդասպաններ, վնասարարներ, Հիշել այդ մասին և ամրապնդել մեր սոցիալիստական հետախուզությունը, սիստեմատիկաբար ոգնելով նրան՝ զախախելու և արժատախիլ անելու ժողովրդի թշնամիներին»:

Ստալինյան առաջին յերկու հնդամյակների հաջող կատարումը հնարավորություն և տվել մեր յերկրի առջև նոր վիթխարի խնդիր դնելու: Ընկ. Մոլոտովի գեկուցման առթիվ ՀամԿ(բ)կ XVIII համագումարի բանաձևում ասվում է, «Այժմ, յերբ ԽՍՀՄ կազմավորվել և վորպես սոցիալիստական պետություն, հիմնականում ավարտել և ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցումը և արդյունաբերության ու գյուղական տնտեսության մեջ արտադրության տեխնիկայի մակարդակով Յելրուպայի ամեն մի կապիտալիստական յերկրից ավելի առաջ և կանգնած, — այժմ մենք կարող ենք և պետք և ամբողջ հասակով գործնականորեն դնենք և իրագործենք ԽՍՀՄ հիմնական տնտեսական խնդիրը՝ տնտեսական տեսակետից ևս հասնել և առաջ անցնել Յելրոպայի առավել զարգացած կապիտալիստական յերկրներից և Ամերիկայի Միացյալ Նահանգներից, վերջնականական վեճով այդ խնդիրը մոտակա ժամանակաշրջանի ընթացքում»:

Տնտեսական տեսակետից հասնել և առաջ անցնել գլխավոր կապիտալիստական յերկրներից — այդ նշանակում և արտադրությունը բարձրացնել այնպիսի մակարդակի, վորպեսզի մեր յերկրում բնակչության մի հոգում ավելի շատ արդյունաբերական արտադրանք հասնի, քան ամենից առաջավոր կապիտալիստական յերկրում:

Ընկեր Ստալինը կուսակցության XVIII համագումարում տված գեկուցման մեջ ասել է, վոր մեր յերկիրը տնտեսական տեսակետից գեռևս հետ և մնում կապիտալիստական յերկրներից: Խորհրդային Միությունը 1938 թվականին արտադրել և մոտ 15 միլիոն տոնն չուգում, իսկ Անգլիան՝ 7 միլիոն տոնն: Քայլց, — ասել է ընկեր Ստալինը, — յեթե չուգումի այդ տոնները բաժանենք բնակչության քանակության վրա, ապա կը սացվի, վոր Անգլիայում 1938 թվականին բնակչության յուգա-

քանչյուր շնչին ընկել է 145 կիլոգրամ չուգում, իսկ ԽՍՀՄ-ում՝ բնդամենը 87 կիլոգրամ: Կամ ելի՛ Անգլիան 1938 թ. արտադրել է 10 միլիոն և 800 հազար տոնն պողպատ և մոտ 29 միլիարդ կիլովատ-ժամ (ելեկտրաեներգիայի արտադրությունը). իսկ ԽՍՀՄ արտադրել է 18 միլիոն տոնն պողպատ և ավելի քան 39 միլիարդ կիլովատ-ժամ: Թվում եր, թե մեզ մոտ գործն ավելի լավ է, քան Անգլիայում: Բայց յեթե այդ բոլոր տոնները և կիլովատ-ժամերը բաժանենք բնակչության քանակության վրա, ապա ստացվում է, վոր Անգլիայում 1938 թ. բնակչության յուրաքանչյուր շնչին ընկել է 226 կիլոգրամ պողպատ և 620 կիլովատ-ժամ, այն ժամանակ, յերբ ԽՍՀՄ-ում բնակչության մի շնչին ընկել է բնդամենը 107 կիլոգրամ պողպատ յեկ 233 կիլովատ-ժամ»:

Ընկեր Ստալինը կուսակցության և յերկրի առջև խնդիր ե գրել՝ ամենակարճ ժամկետում — 10-15 տարում — գլխավոր կապիտալիստական յերկրներից առաջ անցնել նաև տնտեսական տեսակետից: «Մենք այդ կարող ենք անել, և մենք այդ պետք ե անենք: Միայն այն դեպքում, յեթե տնտեսապես առաջ անցնենք գլխավոր կապիտալիստական յերկրներից, մենք կարող ենք հույս ունենալ, վոր մեր յերկրը լիովին հագեցած կրտինի սպառման առարկաներով, մեզ մոտ կլինի մթերքների տուառություն, և մենք հնարավորություն կստանանք կոմոնիզմի առաջին ֆազայից անցում կատարել դեպի նրա յերկրորդ ֆազան»:

Ընկեր Ստալինն այնուհետև սովորեցնում է, թե վորքան ավելի բարձր լինի աշխատանքի արտադրողականությունը մեր յերկրում, վորքան ավելի կատարելագործվի և զարգանա տեխնիկական, մենք այնքան ավելի արագ կհասնենք նվիրական նպատակին — կոմոնիզմի հայթանակին:

Կուսակցության XVIII համագումարի պատմական վորոշումներում արտահայտված են ամբողջ խորհրդային ժողովրդի մտքերն ու զգացմունքները: Բանվորները, կոլխոզնիկները, ինտելիգենցիան, համախմբվելով լենինի-Ստալինի կուսակցության հետ դրոշի ներքո, հաջող պայքար են մղում այդ պատմական խնդիրների որագործման համար:

Անցած տարին նոր հիանալի հաղթանակներ բերնց: 1939 թվականին արդյունաբերությունը տվել է 14,7 տոկոսի աճ: Արդյունաբերության առանձին ջյուղերը տվել են 20-ից մինչև 46,5 տոկոսի աճ: Այդ աճումն զգալիորեն ավելի բարձր է արդյունաբերության զարգացման 1938 թվականի տեմպերից: 1939 թ. 10 ամսվա ընթացքում արդյունաբերության մեջ աշխատանքի արտադրողականությունն աճել է 17 տոկոսով, վոր զգալիորեն գերազանցում և նախանշված պլաններին:

Մեծ են մեր հաջողությունները և գյուղական տնտեսության մեջ: Չնայած անբարենպաստ կիմայական պայմաններին, հացահատիկայինների բերքահավաքը 1939 թվականին հասել է 6,5 միլիարդ դիմի, վոր 11 տոկոսով՝ գերազանցում է 1938 թ. բերքահավաքին: Բամբակի հոմք հավաքված է 5 տոկոսով ավելի, քան 1938 թվականին, շաքարի ձակնդեղ՝ 26 տոկոսով, կարտոֆիլ՝ 60 տոկոսով և այլն:

Ստալինյան հնգամյակների իրագործումը բոլոր պայմաններն են ստեղծել աշխատավորների նյութական և կուտուրական մակարդակի հետագա արագ վերելքի համար: Մեզ մոտ բոլոր հընարավորությունները կան յերկրում ապրանքների ու մթերքների առատություն ապահովելու համար: Մեզ մոտ բոլոր պայմանները կան աշխատավորների արագ աճող կուտուրական պահանջների լրիվ բավարարման համար:

Այժմ գլխավոր, վճռողական խնդիրն աշխատավորների կոմունիստական դաստիարակությունն եւ: Այդ խնդիրի կատարումից, բանվորների, գյուղացիների, ինտելիգենցիայի կոմունիստական գիտակցության աճից է կախված մնացած բոլոր խնդիրների լուծումը:

Մեր յերկրում կառուցված է սոցիալիստական հասարակությունը: Կյանքի պայմաններն արմատապես փոխվել են: Սակայն մարդկանց գիտակցության մեջ դեռ մնացել են կապիտալիզմի մնացուկները, Հին, բոլիտական հասարակության սովորությունները: Նման մնացուկներ են հանդիսանում պետությունից, կոլխոզից ավելի շատ բան պոկելու և պետությանը, կոլխոզին ավելի քիչ բան տալու ձգտումը, վոլ — սոցիալիստական վերաբերմունքը հանրային և պետական սեփականությանը: Կապիտալիզմի մնացուկներն արտահայտվում են կոլխոզային գյուղացիության

մի մասի մեջ դեռ շղերացված մանր - սեփականատիրական սովորությներով, կրօնական նախապաշտումներով, կենցաղի մեջ մանր - բուրդուական սովորությներով և այլն:

Գրող Մ. Ա. Շոլոխովն իր «Հերկած խոպանը» վեպում վառ կերպով ցուց է տվել, թե ինչպես են ընթացել նոր առաջավոր պայքարը հին, մանր - սեփականատիրական իդեոլոգիայի դեմ կողեկտիվացման առաջին տարիներում: Վեպում պատմվում է, թե ինչպես գյուղացիները խզել են նախկին մենատնտես կյանքի հետ և կոլխոզ մտել: Սակայն նրանց վրա դեռ կախված են նախկին կյանքի սովորությները: Նրանցից մեկը, Կոնդրատ Մայդաննիկովը, տանջվում է, «իսկ յերբ դու ինձ կթողնես անիծյալ խիզ: Իսկ յերբ դու կշորանաս, վնասակար սատանա... Յեվ ինչից եւ դա: Գնում եմ ձիերի մսուրների կողքով, ուրիշի ձիեր են կանգնած, — ինձ ի՞նչ, իսկ հենց վոր հասնում եմ իմին, նայում եմ նրա մեջքին՝ ու զոլը մինչև բաշը հասած, ճղած ճախականին, և ահա սկսում ե սիրտս կսկծալ, ասես, թե հենց եղ բուպեցին կնոշից ավելի հարազատ ե ինձ համար: Յեվ միշտ ել աշխատում ես ավելի լավ, սիզավոր, ավելի մանր խոտ գցել նրա առաջը»:

Միիննավոր խորհրդային քաղաքացիներ, իրենց հայրենիքի բոցավառ հայրենասերներն անձնազո՞ն կերպով աշխատում են ԽՍՀՄ հզորության ամրապնդման վրա, ձեռք են բերում աշխատական տնտեսված արտադրողականություն: Բայց լողիները, թոշկանները, գջլողները, կեղծ կոլխոզնիկները դեռ չեն վերացել:

Խնդիրն այն է, վորպեսզի մեր յերկրի բոլոր քաղաքացիներին դարձնենք կոմունիզմի գիտակից և ակտիվ կառուցողներ:

Այն ժամանակ ել ավելի վառ կիրթի մեր յերկրը, կրազմապատկվեն նրա հարստությունները, մթերքների լիակատար առատություն կիմի:

Լենինյան - ստալինյան կուսակցության XVIII համագումարի պատմական վորոշումների և ընկեր Ստալինի ցուցումների իրագործման համար մղվող պայքարում պատվավոր տեղը պատկանում է բոլշևիկյան մամուկին և, մասնավորապես, նրա ամենաբազմաքանակ ջոկատին — պատի թերթերին: Ֆարբիկների, գործարանների, տրանսպորտի, սովմոզների, կոլխոզների, ՄՏ կայանների, հիմնարկությունների պատի թերթերը մասսաների կո-

մունիստական դաստիարակության հզոր միջոցն են հանդիսանում: Նրանք իրենց շուրջն են միացնում հարյուր հաղարավոր բանգուղթղթակիցների, խմբուների անդամների: Սուածավոր ժարդկանց ստախանովյան աշխատանքի որինակով թերթերը կոմոնիստական վերաբերմունք են սովորեցնում դեպի աշխատանքը: Դրա հետմիասին, մերկացնելով լողիներին, պրոտաքույժներին, կեղծ կոլխոզնիկներին, խարազանելով հակահանրային վարդագիծը, նրանք աշխատավորներին ոգնում են հաղթահարել կապիտալիզմի մնացուկները դիտակցության մեջ:

Սակայն դեռ քիչ շեն այն պատի թերթերը, վորոնք վատ են աշխատում: Վորոշ թերթեր լուս են տեսնում միայն «Հորեւենական որերը», լցում են ընդհանուր, ճրճուն հոդվածներով: Աւրիշ թերթերը գրում են միայն վատի մասին, անցնում են դրական փաստերի ու որինակների մոտով, լուսված են մատնում մեր իրականության հիանալի յերեվութիւնները: Պարզ է, վոր այդ գեղագիտ թերթը մեր կյանքը ցույց է տալիս աղավաղված ձևով, միակողմանի:

Խնդիրն այն է, վորպեսզի բոլոր պատի թերթերը դարձնենք մարտական, հետաքրքիր, ձեռներեց: Յուրաքանչյուր պատի թերթ պետք է դառնա կուսակցական կազմակերպության հավատարիմ ոգնականը, աշխատավորների բարեկամն ու կազմակերպիչը՝ կոմոնիստական հասարակություն ստեղծելու համար նրանց տարած աշխատանքում: Պետք է ավելի ևս բարձրացնել բանգուղթղթակիցների միլիոնանոց բանակի մարտունակությունը, նրանց գործունելությունն ուղղել զեպի սոցիալիստական շինարարության հիմնական, վճռական տեղամասերը:

ՍՈՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Ընկ. Մոլոտովի զեկուցման առթիվ ՀամԿ(թ)կ XVIII համագումարի պատմական բանաձևում ասվում է. «...Մենք պետք են ապահովենք սոցիալիստական մրցության և ստախանովյան շարժման ըստամենայնի ծավալումը, աշխատանքային կարգապահության անշեղ ամրացումը բոլոր ձեռնարկություններում յեկ հիմնարկություններում, բոլոր կոլխոզներում, մենք պետք են ապահովենք բանվորների, գյուղացիների, ինտելիգենցիայի սոցիալիստական հասարակությանն արժանի բարձր արտադրողականություն»:

Այդ՝ գործողությունների լայն ծրագիր է յուրաքանչյուր պատի թերթի համար: Ստորին մամուլը շատ բան կարող է անել սոցիալիստական մրցության ծավալման համար: Պատի թերթերը պիտի պատմեն, թե առաջավոր մարդիկ աշխատանքի ինչպիսի մեթոդներով են հաջողություն ձեռք բերել մրցության մեջ, ոգնեն մրցուներին, բացահայտեն հետ մնալու պատճառները, քննադատեն մրցությանը խանգարող թերությունները:

Պետք է համարից համար հաղորդել ցեխում, բրիգագում, կոլխոզում տեղի ունեցող մրցության ընթացքի մասին: Յեկ վում միայն ամժիպագրեր տեղավորելու միջոցով: Մենակ ամփոփագրերով շլիտի սահմանափակվել: Անհրաժեշտ է կոնկրետ որինակով ցույց տալ, թե ինչպես է հաջողություն ձեռք բերվել մրցության մեջ, կամ թե ինչու կոլեկտիվը հետ է մնում:

Ընկեր Ստալինը սովորեցնում է. «Մրցության մեջ ամենանշանակալին կայանում է նրանում, վոր նա արմատական հեղա-

շըրջում և կատարում աշխատանքի նկատմամբ մարդկանց հայցքների մեջ, վորովհետև նա աշխատանքն ամոթալի և ծանր լից, վորպիսին նա համարվում եր առաջ, դարձնում է պատվի, դործ, փառքի դործ, արփորյան և ներսուրյան դործ»:

Ազնելով սոցիալիստական մրցության ծավալմանը, բանվորների, կոլխոզների մեջ, ինտելիգենցիայի նոր խավեր ներգրավելով մրցողների շարքերը, հենց այդպիսով թերթն աշխատավորներին դաստիարակում և աշխատանքի նկատմամբ նոր, սոցիալիստական վերաբերմունքի վկովվել:

Վոլ թե կապիտալիստի, կալվածատիրոջ, արյուն ծծող կուկակի, այլ իր համար, իր պետության համար կատարվող աշխատանքը դաստիարակել և սոցիալիզմի գիտակից կառուցողներ։ Աշխատավորների նյութական դրության արմատական բարեկալումը, ամեն տեսակի շահագործման բացակայությունը, նոր տեխնիկայի, նոր ֆարբիկաների և գործարանների ստեղծումը, նույնական և աչք տեխնիկային տիրապետած նոր կազմերի դաստիարակությունն առաջ են բերել ստախանովյան շարժումը, վորը հանդիսանալով սոցիալիստական մրցության բարձրագույն ետապը, «...բաց ե անում մեր առաջ այն ուղին, վորով միայն կարելի յե համանել աշխատանքի արտադրողականության այն բարձրագույն ցուցանիշներին, վորոնք անհրաժեշտ են սոցիալիզմից կոմունիզմին անցնելու և մտավոր աշխատանքի ու գիտիկական աշխատանքի հակառակությունը վոշնչացնելու համար»։ (ՍՍԼԻՆ, ճառ՝ արտասանած ստախանովականների համամիութենական 1-ին խորհրդակցությունում):

Պատի թերթերը պետք ե կանոնավոր լուսարանն ստախանովյան շարժման հարցերը, աշխատեն այն տարածել լայնությամբ ու խորությամբ։

Մոսկվայի վելոգործարանի ցեխերից մեկում լույս ե տեսնում «Ավտոմատշիկ» ամենորյա մարտական թերթը։ Նա ցեխի կողեկտիվին մեծ ոգնություն ե ցույց տալիս արտադրական պլանի կատարման համար մղվող պայքարում։ Տեսնենք, թե ինչպես ե նա ձեռք բերում ստախանովականների շարքերի աճումը։

1939 թվականի նոյեմբերի 14-ին գործարանի առաջավորքանության աշխատավորներն աշխատավորների գեղուտատատների տեղական Խոր-

Հուրդների առաջիկա ընտրությունների պատվին ստախանովյան հերթակալության ելին կանգնել։ «Ավտոմատշիկ» թերթը զետեղել եր հերթակալության մասնակիցների նամակը, վորով նրանք ցեղերի վարչությունից պահանջում ելին ժամանակին և լավ նորոգել ստանուկները, սահմանել ոպերացիոն կոնտրոլ և արտադրուանքի վորակի մանրազննին ստուգում։

Անցնում ե մի որ։ Թերթը հանրագումար և տալիս և հաղորդում, վոր հերթակալության մասնակիցները պլանն զգալիորեն գերակատարել են։ Յերկրորդ բաժանմունքի բանվորները, վորոնք առաջ նորմաները շելին կատարում, նոյեմբերի 14-ին գերակատարել ելին գրանք։

Ելդ նույն համարում «Ավտոմատշիկ»-ն ահազանգում ե, վոր ստանուկների մեծամասնությունը, վորոնց վրա աշխատում են ստախանովականները, ժամանակին չկատարած նորոգման պատճառով պարապուրդ են ունենում։ Թերթը մեխանիկից պահանջում ե՝ շտապ միջոցներ ձեռք առնել այդ թերությունները վերացնելու համար։

Հետեւալ համարում թերթը, խոսելով ստախանովյան շարժման մեծ նշանկության մասին, կոչ ե անում կոմյերիտականներին՝ լինել ստախանովականների առաջին շարքերում։ Յուրաքանչյուր համարում «Ավտոմատշիկ»-ն ամփոփագիր ե տեղավորում հերթակալության աշխատանքի արդյունքների մասին։

Շարժման մեջ են մտնում նորանոր բանվորներ։ Թերթը նրանց ոգնում ե ավելի արագ վերացնել աշխատանքի հ' լ ավելի բարձր արտադրողականություն ձեռք բերելուն խանգարող թերությունները։ Թերթը մասսայականացնում ե այն ուցիոնալիզատորական միջոցառումները, վոր գործադրում են ցեխի առաջարկում մարդիկ։

Անցնում ե յերկու շաբաթ։ Հանրագումարը տալով, թերթը նշում ե, վոր արտադրողականությունը ցեխում աճել ե, ստանուկների կարգավորումը բարեկալվել ե, խուսանի տոկոսն իջել ե։

«Ավտոմատշիկ»-ն «ընդհանուր առմամբ և ամբողջովին» շիգում։ Թերթն առանձին բանվորներին ոգնում ե առաջավոր դառնալ։ Ահա մի բնորոշ փաստ։ Վերջերս ցեխը յեկած բանվորվ-ն նորմաները շեր կատարում։ Թերթը նրան մի բանի խորհուրդ ե տալիս, բացատրում ե նրան, թե ինչպես ավելի լավ

կազմակերպել աշխատանքի տեղը: Թերթն անդադրում հետեւվում է նրա աշխատանքին: Վորոշ ժամանակ անց նա հաղորդում է, վոր ընկ. Վ-ն մոտ են նորման կատարելուն: Այնուհետև ընթերցողներն «Ավտոմատչիկ»-ի հերթական համարներից մեկում կարդում են, վոր ընկ. Վ-ն նորմաները կատարում ու գերակատարում են և տեղական Խորհուրդների առաջիկա ընտրությունների պատվին հայտարարած հերթակալության և կանգնել:

Դրական փորձը ցուցաբերելու հետ մեկտեղ «Ավտոմատչիկ»-ը քննադատում է նրանց, ովքեր քիչ են աշխատում մարդկանց հետ, չեն ուսումնասիրում ստախանովյան փորձը:

Այսպես՝ «Ավտոմատչիկ» պատի թերթն որեցոր մեծ աշխատանք է կատարում ստախանովյականների աճեցման, աշխատավորներին աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերունքի վորով դաստիարակելու ուղղությամբ:

1939 թվականի Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցողների մեջ քիչ պատի թերթեր չեն յեղել, վորոնք ցուցահանդեսին մասնակցելու պատվավոր իրավունքը ձեռք են բերել սոցիալիստական մրցությունը և ստախանովյան շարժումը կոլխոզների մեջ ծավալելու համար կատարած մարտական աշխատանքով: Նրանց հիանալի գործերի մասին պերճախոս կերպով պատմում են Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի մամուլի պավիլոնի Պատվավոր գրքում արված գրությունները: Ահա զրանցից մի քանիսը.

«Յոլշիստսկայա պրավդա»-ն — վորոնեմի մարզի Պողոսունսկի շրջանի «Ուտարնիկ» կոլխոզի պատի թերթն եւ: Արևածաղիկի բարձր բերքի համար ողակների մրցության նախաձեռնողն եւ: Լուսաբանելով ընկ. Կողիրևայի առաջավոր ողակի աշխատանքը, թերթն ովանել է մյուս ողակներին՝ ընդորինակել Կողիրևայի ողակի հիանալի փորձը: 1939 թվականի սկզբին «Ուտարնիկ» կոլխոզը հաշողությամբ կատարում է տեղական պարարտանյութերի հավաքը, վոր կազմակերպվել եր թերթի նախաձեռնությամբ: Թերթի գյուղթղթակիցները - կոլխոզի լավագույն ստախանովյականները, ակտիվ հասարակական աշխատողները՝ ագիտատորներ են:

«Զա ստալինսկի ուրոժայ»-ը — Կրասնոդարի յերկրամասի Տիմաշևսկի շրջանի «Պոլիտուտգելեց» կոլխոզի 2-րդ դաշտավարական բրիգադի պատի թերթն եւ: Ստալինցան Յերրորդ Հնդամական վայրության մասին կամաց աշխատանքի մասին պատում է ստախանովյականների նամակները: Այդ նամակ-

անվան մրցության նախաձեռնողը, ստախանովյան շարժման և բրիգադում աշխատանքի ստախանովյան մեթոդների կիրառման կազմակերպիչն եւ: Բրիգադի ութ ողակներից հինգը ստախանովյան են: Թերթի ոգնությամբ բրիգադը նվաճել է Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու իրավունքը»:

«Զա ուրոժայ» — Ռյազանի մարզի Սասովսկի շրջանի «Պոբեդա տրուպա» կոլխոզի պատի թերթը՝ լույս ե տեսնում ամսական 8-10 անգամ: Գյուղավորել ե կոլխոզնիկների մասսայական շարժումը ճակնդեղի և հացահատիկացինների բարձր բերքատրվության համար: Սիստեմատիկորեն լուսաբանում է ստախանովյականների փորձը: Մի շարք ողակներում շաբարի ճակնդեղի բերքը հասել է հեկտարից 400 ցենտների, իսկ Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի մասնակից գյուղթղթականիցի նյութա Դավիդովայի ողակը՝ հեկտարից հավաքի և 32,5 ցենտներ գարնան ցորեն: 8 տարվա ընթացքում, 1931 թվականի միջնական 1939 թվականի մայիսը լույս ե ընծայված 500 համար: Թերթն ունի 72 գյուղթղթական: Ամսական զետեղում ե գյուղթղթականիցների մինչև 70 նամակ:

«Կիրովեց» — Խարկովի մարզի Նովովոլովսկի շրջանի Կիրովի անվան կոլխոզի ամենորյա պատի թերթն եւ: Թերթի գյուղթղթակիցների թվումն է շքանշանակիր Ա. Տ. Տիմչենկոն, կոլխոզի կիմորը: «Կիրովեց»-ը մեծ դեր է խաղացել ստախանովյան շարժման ծավալման գործում: 1938 թվականին կոլխոզում կար շարժման ծավալման արդեն 96 հոգի յեն: Նրանցից շորսը ցուցահանդեսի մասնակիցներ են»:

Դյուլական պատի մամուլը պետք է լայնորեն պրոպագանդանի իր կոլխոզի, սովորողի, մեքենատրակտորային կայանի լավագույն մարդկանց փորձը: Այդ մարդկանց կյանքից ու աշխատանքից վերցրած որինակներով պետք է գյուղի բոլոր աշխատավորներին սովորեցնել աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերունքի:

Զելյարինսկի մարզի Կամենսկի շրջանի լենինի անվան կուսողի «Զա ստախանովյակոյե գլիմենիկ» պատի թերթը՝ համար տեղավորում է ստախանովյականների նամակները: Այդ նամակ-

կազմակերպել աշխատանքի տեղը: Թերթն անդադում հետեւ վում և նրա աշխատանքին: Վորոշ ժամանակ անց նա հաղորդում է, վոր ընկ. Վ-ն մոտ և նորման կատարելուն: Այնուհետև ընթերցողներն «Ավտոմատչիկ»-ի հերթական համարներից մեկում կարում են, վոր ընկ. Վ-ն նորմաները կատարում ու գերակատարում եւ և տեղական Խորհուրդների առաջիկա ընտրությունների պատվին հայտարարած հերթակալության և կանգնել:

Դրական փորձը ցուցաբերելու հետ մեկտեղ «Ավտոմատչիկ»-ը քննադատում է նրանց, ովքեր քիչ են աշխատում մարդկանց հետ, չեն ուսումնասիրում ստախանովյան փորձը:

Այսպես՝ «Ավտոմատչիկ» պատի թերթն որեցոր մեծ աշխատանք է կատարում ստախանովյականների աճեցման, աշխատավորներին աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի վոգով դաստիարակելու ուղղությամբ:

1939 թվականի Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցողների մեջ քիչ պատի թերթեր չեն յեղել, վորոնք ցուցահանդեսին մասնակցելու պատվավոր իրավունքը ձեռք են բերել սոցիալիստական մրցությունը և ստախանովյան շարժումը կոլխոզների մեջ ծավալելու համար կատարած մարտական աշխատանքով: Նրանց հիմնալի փորձերի մասին պերճախոս կերպով պատմում են Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի մամուլի պավիլոնի Պատվավոր գրքում արված գրությունները: Ահա զրանցից մի քանիսը.

«Բոլշևիկստոկայա պրավդա»-ն — վորոնեմի մարզի Պոդգորենսկի շրջանի «Ռուգարնիկ» կոլխոզի պատի թերթն եւ: Արևածաղկի բարձր բերքի համար ողակների մրցության նախաձեռնողն եւ: Կուսաքանելով ընկ. Կողիրկայի առաջավոր ողակի աշխատանքը, թերթն ոգնել ե մյուս ողակներին՝ ընդորինակել Կողիրկայի ողակի հիմնալի փորձը: 1939 թվականի սկզբին «Ռուգարնիկ» կոլխոզը հաջողությամբ կատարում է տեղական պարարտանյութերի հավաքը, վոր կազմակերպել եր թերթի նախաձեռնությամբ: Թերթի գյուղ-թղթակիցները - կոլխոզի լավագույն ստախանովականները, ակտիվ հասարակական աշխատողները՝ ագիտատորներ են»:

«Զա ստալինսկի ուղությա»-ը — Կրասնոդարի յերկրամասի Տիմաշևսկի շրջանի «Պոլիտուգելեց» կոլխոզի 2-րդ գաշտավարական բրիգադի պատի թերթն եւ: Ստալինյան Յերրորդ Համականքավայրենությամբ կատարում է ստախանովականների նամակները: Այդ նամակ-

անվան մրցության նախաձեռնողը, ստախանովյան շարժման և բրիգադում աշխատանքի ստախանովյան մեթոդների կիրառման կազմակերպիչն եւ: Բրիգադի ութ ողակներից հինգը ստախանովյան են: Թերթի ոգնությամբ բրիգադը նվաճել է Համամիութենական գյուղատնտեսական մասնակցելու իրավունքը»:

«Զա ուղությա» — Ռյազանի մարզի Սասովսկի շրջանի «Պորբեգա տրուգա» կոլխոզի պատի թերթը՝ լույս ե տեսնում ամսական 8-10 անգամ: Գլխավորել է կոլխոզնիկների մասսայական շարժումը ճակնդեղի և հացահատիկայինների բարձր բերքատրվության համար: Սիստեմատիկորեն լուսաբանում է ստախանովականների փորձը: Մի շարք ողակներում շաքարի ճակնդեղի բերքը հասել է հեկտարից 400 ցենտների, իսկ Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի մասնակից գյուղիղթականցի Նյուրա Դավիդովայի ողակը՝ հեկտարից հավաքի և 32,5 ցենտներ գարնան ցորեն: 8 տարվա ընթացքում, 1931 թվականի մինչև 1939 թվականի մայիսը լույս ե ընծայված 500 համար: Թերթն ունի 72 գյուղթղթակից: Ամսական գետեղում է գյուղթղթակիցների մինչև 70 նամակ»:

«Կիրովեց» — Խարկովի մարզի Նովովոլուգովսկի շրջանի Կիրովի անվան կոլխոզի ամենորյա պատի թերթն եւ: Թերթի գյուղթղթակիցների թվումն ե շքանշանակիր Ա. Տ. Տիմչենկոն, կոլխոզի կթվորը: «Կիրովեց»-ը մեծ դեր է խաղացել ստախանովյան կարշարժման ծավալման գործում: 1938 թվականին կոլխոզում կարշարժման ծավալման առաջնային առաջնային արդեն 96 հոգի յեն: Նրանցից շորսը ցուցահանդեսի մասնակիցներ են»:

Գյուղական պատի մամուլը պետք է լայնորեն պըսպագանդանի իր կոլխոզի, սովորողի, մեքենատրակտորային կայանի լավագույն մարդկանց փորձը: Այդ մարդկանց կյանքից ու աշխատանքից վերցրած ողինակներով պետք է գյուղի բոլոր աշխատավորներին սովորեցնել աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի:

Զելյարինսկի մարզի Կամենսկի շրջանի լենինի անվան կոլխոզի «Զա ստախանովակիցներից» պատի թերթը համայնքավայրում է ստախանովականների նամակները: Այդ նամակ-

ները վառ ազիտացիա յեն բարձր արտադրողականության համար, աշխատանքի նկատմամբ գիտակից վերաբերմունքի համար: Բերենք այդպիսի թղթակցություններից մեկը — տրակտորիստ իվան Ռատրուլսովի նամակը:

„ՆՈՐՄԱՅԻ 193 ՏՈՎԱՍ

Որես անիվամբոր տրակտորով 15 հեկտարի փոխարեն յես ցանել եմ 29 հեկտար: Նորման կատարել եմ 193 տոկոսով: Աշխատանքի յեմ դուրս յեկել, ինչպես միշտ, առավոտյան ժամը 7-ին, իսկ յերեկոյան ժամը 7-ին վերջացրել: Բայց այդ որն աշխատել եմ նոր ձեռվէ:

Այնպիսի շերտ եր բաժին ընկել, վոր ստիպված եյի մերթ լանջն ի վեր բարձրանալ, մերթ իշնել ներքեւ: Վեր բարձրանալիս գնում եյի յերկորդ արագությամբ, իսկ իշնում եյի յերրորդով: Դրա հաշվին հասնում եյի տրակտորի շարժման արագության և արտադրողականության ավելացման:

Աշխատանքի ժամանակ հետևում եյի տրակտորի մեջ վառելիքի և զրի քանակությանը: Կանգ առնելուց խոսափելու համար հենց վոր զրի և վառելիքի պաշարներն սկսում են հատել, տրակտորը շկանգնեցնելով, ոգնականիս ուղարկում եմ լրացման հետևից: Դրա շնորհիվ վառելիք և զուր լցնելու համար 30 րոպեի փոխարեն գործադրում եյի միայն 15 րոպե:

Ճաշի ժամանակ ևս տրակտորը չեյի կանգնեցնում. Հենց վոր ուտել եմ ուղում, անմիջապես հայտնում եմ իմ զուգերթ Կոնստանտին Ռատրուլսովին: Նա գալիս, նստում եղեկի մոտ, իսկ յես գնում եմ ճաշելու:

Աշխատանքը վերջանալուց հետո մեզնից յուրաքանչյուրը մեքնայից շի հետանում, մինչև վոր նա շստուգվի, կեղտից շմաքրվի, շուրջվի և վառելիքով շապահովվի:

Այդպիսի թղթակցությունը պատի թերթում մեծ ոգուտ կրերի: Դա կոլխոզնիկներին նոր, կոմունիստական վերաբերմունք և սովորեցնում աշխատանքի նկատմամբ, յերբ ամբողջ յեռանդը, նախաձեռնությունը, փորձի յեն դրվում աշխատանքի:

Ճըր արտադրողականություն ապահովելու, ցանքն արագ և լավ վերջացնելու համար: Այդպիսի աշխատանքն ամրացնում և կոլխոզի հանրային տնտեսությունը, նպաստում և կոլխոզնիկների կուլտուրական և ունեվոր կյանքի ամենաարագ ծաղկմանը:

Պատի թերթերի խմբկոլները և բանգյուղթղթակիցները պետք են խորապես գիտակցեն որինակի ուժը: Տեղական կյանքից կոնկրետ փաստերով նրանք պետք են ցուց տան, թե ինչպես վերաբերվել հանձնարարված աշխատանքին, նախաձեռնություն զարթեցնեն: Սուանձնապես կարելոր ե, վորպեսզի խմբագիրները, խմբկոլների անդամները, բանգյուղթղթակիցներն ուշագրությամբ և հետաքրքրորեն ուսումնասիրեն ձեռնարկության, կոլխոզի կյանքում տեղի ունեցող ամեն բան: Նկատելով նորի ծիլերը, նրանք պետք են ձգտեն ամեն կերպ տարածել աշխատանքի լավ մեթոդները: Բերենք մի որինակի: Ստախանովական բանվորն անցել են մի քանի ստանուկներ սպասարկելուն կամ սկսել են կատարել մի քանի պրոֆեսիա: Այդ ստախանովայան շարժման մեջ նոր յերեվուցիթ ե, վորը հսկայական ապագա ունի: Պատի թերթի խընդիրն ե լայնորեն մասսայականացնել այդպիսի նախաձեռնությունը, համառորեն ձգտել դրա տարածմանը:

Ճիշտ են հասկացել իրենց խնդիրը I, Մ. Կագանովիչի անվան շարիկոպոդշիպնիկի Առաջին գործարանի վարչության «Միգնալ» պատի թերթի խմբկոլեգիան և բանթղթակիցները: Թերթը մեծ աշխատանք և տանում բազմաստանոկայինների շարժման և պրոֆեսիաների համատեղման շարժման ընդլայնման ուղղությամբ:

1939 թվականի հոկտեմբերի 12-ի № 2011-ում մի հետաքրքիր ծաղրանկար եր զետեղված: Թղթերի կույտի միշտ ցցված են յերկու մարդու գլուխի: Նրանցից մեկն ասում ե.

— Ինչպես՞ս: Մեզ մոտ վոշինչ գուրս չի գալիս շատ ստանուկների վրա: Այս բոպեյին գրություն կգրեմ:

Մյուսն ասում ե.

— Ծը... ձեր ուժը ևս չի պատում շատ ստանուկների վրա... Իսկույն գրություն կգրեմ...

Ծաղրանկարի տակ զետեղված ե բազմաստանոկային - ստախանովականությունի ընկ. Լապտևայի յելույթից վերցրած հետեւլակտորը.

«Յես գիտեմ բազմաստանոկային կանանց, վորոնք շատ են ու-
զում անցնել մի քանի ստանոկ սպասարկելուն, բայց նրանց չեն
ոգնում այդ իրավործելու։ Ինժեներա - տեխնիկական աշխատող-
ներից վոմանք մի կողմ են կանգնած, նրանք թաղվել են թղթերի
մեջ և չեն ուզում տեսնել, թե ինչ ե անցնում նրանց մոտով։»

Այդ նույն համարում զետեղված ե մի թղթակցություն, վորը
քննադատում ե գործարանային վարչության բաժիններին, վորոնք
անհրաժեշտ ոգնություն չեն ցուց տալիս բազմաստանոկայիննե-
րին։

«Միգնար» պատի թերթը թղթակցություն ե հրապարակում բազ-
մաստանոկայիններին սպասարկելու մասին, այն մասին, թե ինչ
ե արվում աշխատանքի տեղը ձիշտ կազմակերպելու համար,
վորպեսզի խուսափեն ավելորդ շարժումներից, աշխատանքի և ո-
ժանդակիչ գործիքի պահպանման համար և այլն։ Թղթակցության
մեջ հարց ե բարձրացվում աշխատանքի տեղերի պարզորդ և
պլանային սպասարկման վերաբերյալ։

Բանթղթակիցները պետք ե ամեն կերպ ձգտեն սոցիալիստա-
կան մրցության, ստախանովյան շարժման զարգացմանը։ Ուշա-
գիր հետեւելով, թե ինչ ե կատարվում ցեխում, բրիգադում, ըս-
տանողի մոտ, տրակտորի մոտ, նրանք պետք ե ինչպես պատի,
այնպես և բազմատիրաժային, շրջանային, մարզային, կենտրո-
նական մամուլում ժամանակին պաշտպանեն ամեն մի լավ նա-
խաձեռնություն, վորը կարող ե տալ աշխատանքի արտադրողա-
կանության ավելացում։

Ահա Ժիտոմիրի մարզի «Բոլշևիկ Ռլեշինի» կոլխոզի ողակա-
վարութիւն, խմբկոլեգիայի անդամ, գյուղթղթակցութիւն Յեկատիրինա
իզանի աշխատանքից մի որինակ։ Նրա ողակը՝ առաջավորը
շրջանում — միջին թվով հեկտարից ձեռք ե թերել 20 ցենտներ
ցորենի, 8 ցենտներ մանրաթել — վուշի թերթ։

Յեկատիրինա կեանն սկսում ե ոգնել Ալեքսանդրա Խանի հետ
մնացու ողակին։ Սկզբում պարզում են հետ մնալու պատճառնե-
րը։ Բանից գուրս ե գալիս, վոր ողակում աշխատանքը ձիշտ չե-
լազմակերպված, կոլխոզիկների կենցաղային կարիքները շեն
բավարարվում։ Ստախանովականութու ոգնությամբ այդ թերու-
թյունները վերացվում են։

Պատի թերթերն իր ընթերցողներին պատմում ե Յեկատիրինա

նկանի նախաձեռնության մասին, հրապարակում ե նրա ողակի
անդամների կողեկտիվ նամակը, վորով նրանք սոցիալիստական
մրցության են հրավիրում Ալեկսանդրա Խանի ողակին։

Մրցությունն սկսվում է։ Ալեկսանդրայի ողակն զգալիորեն բա-
րեկավում է իր աշխատանքը, վորի մասին պատի թերթը չի մո-
ռանում հաղորդել իր համարներից մեկում։

Պատի թերթի խմբկոլեգիայի խնդիրն ե՝ մամուլում ակտիվ
մասնակցություն ներդրավել ձեռնարկության, կոլխոզի, հիմնար-
կության առաջավոր մարդկանց։ Նրանց հեղինակությունը, նրանց
փորձը և գործի իմացումը կոգնեն թերթին իր հերոսմ դնել հե-
տաքրքիր հարցեր, դառնալ մարտական, նախաձեռնող։

Խմբկոլեգիաներին անհրաժեշտ ե ամեն որ խորհրդակցել ա-
ռաջավոր մարդկանց հետ, թե ինչպես ավելի լավ լուսաբանել նը-
րանց աշխատանքի փորձը։ Վորքան ձեռնարկության, կոլխոզի,
հիմնարկության առաջավոր մարդկան ավելի ակտիվ մասնակցեն
թերթում, պատի թերթն այնքան ավելի հետաքրքորեն, ավելի
հաջողությամբ կկատարի իր առջև դրված խնդիրները։ Ուստի
խմբկոլեգիաների անդամները պետք ե ամենորյա աշխատանք
տանեն՝ ստախանովականներին, առաջավոր ինտելեկտնցիայի
ներկայացուցիչներին բանգյուղթղթակցների շարքերը գրավելու
համար։

Նպատակահարձար ե խմբկոլեգիայի աշխատանքի պլանը
քննարկել բանգյուղթղթակցների խորհրդակցությունում՝ ձեռնար-
կության, կոլխոզի, հիմնարկության անվանի մարդկանց հետ
միասին։

Առաջավոր մարդկանց մասնակցությունը թերթում՝ նրանց
արտադրական, հասարակական գործունելությունն ե՛լ ավելի նը-
շանակալից կրածնի։ Մամուլի միջոցով նրանք կարող են հասա-
րակական կարծիքը կազմակերպել իրենց նախաձեռնությունների
շուրջը։ Հայտնի յեն բազմաթիվ փաստեր, յերբ, որինակ, գյուտարա-
րը պատի թերթի միջոցով հասել ե իր գյուտի իրավարժմանը,
յերբ ստախանովականներն աշխատանքի ունկորդային արտադրո-
ղականության են հասել պատի թերթի ոգնությամբ, վորն ոգնել ե
նրանց՝ թերությունները վերացնելու, յերբ կոլխոզային առաջավոր
ողակի փորձը թերթի միջոցով բոլոր կոլխոզնիկների սեփակա-
նությունն ե դարձել։

ՊԱՅՔԱՐԵԼ ՄԱՐԴԿԱՆՑ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵԶ ԿԱՊԻՏԱԼԻՉՄԻ ՄՆԱՑՈՒԿՆԵՐԸ ՀԱՂԹԱՀԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Պատի թերթի կարևորագույն խնդիրն է հանդիսանում մարդկանց գիտակցության մեջ կապիտալիզմի մնացուկները՝ հաղթահարելու պայքարը։ Հին հասարակությունից ժառանգած սովորությունները, նախապաշտմունքները լուրջ արգելք են հանդիսանում գեպի կոմունիզմը տանող ուղղություն։

«Համեկ(բ)կ պատմության համառոտ դասընթացում» ասվում է, «մարդկանց գիտակցությունն իր զարգացմամբ հետ և մնում նրանց տնտեսական գրությունից։ Այդ պատճառով բոլորության հայցըների մնացուկները մարդկանց գլուխներում մնում են դեռևս մնալու յեն, թեպետ կապիտալիզմն եկոնոմիկայի մեջ արդեն լիկվիդացիայի յեն յննթարկված։ Ընդումին պետք են հաշվի առնել, վոր կապիտալիստական շրջապատօսը, վորի դեմ վառողը շոր պետք են պահել, շանում են այդ մնացուկներն աշխատացնելու ու պաշտպանելու։

Պատի թերթերը, ցույց տալով ստախանովականներին, վորպես սոցիալիստական աշխատանքի հերոսների, պետք են մինույն ժամանակ մերկացնեն լողիներին, թոշկաններին, պրոգուշիկներին, աշխատանքային և պետական կարգապահությունը խախտողներին։ Դեռևս կան մարդիկ, վորոնք աշխատանքի յեն գալիս՝ միայն թե ժամանակ անցկացնեն։ Նրանք ապրում են հին, բուրժուական հայցքներով — «ինձ համար լավ լինի, մնացածների վրա թքած»։ Թերթերը, քննադատելով այդպիսի մարդկանց, պետք են անդադրում բացառապես բարձրացնեն, վոր ուշացումներ,

աշխատանքի ժամանակ աննպատակ շրջապատակ շրջապատակ գործին անփութ վերաբերմունք ցույց տալը քայլքայում են աշխատանքային կարգապահությունը, մեծ վնաս են հասցնում ֆարմիկային, գործարանին, տրանսպորտին, կոլխոզին, հիմնարկությանը, խանգարում են աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելուն։

Ասենք՝ կոշկեղենի ֆաբրիկայում լույս տեսնող պատի թերթերի խմբկութիւնների համար դժվար չեն հաշվել, թե պրոգուշիկների ու լողիների պատճառով յերկիրը քանի զուգ կոշիկ ե կորցրել։ Տեքստիլ ֆաբրիկայում — վորքան մետր կորոբեղեն պակաս և ստացվել, մեքենաշինական գործարանում — վորքան ստանոկ պակաս և տրվել և այլն։ Կոլխոզում — լողիների ու կեղծկոլխոզների մելքով բերքի ինչ կորուստներ կան, քանի որով ձգձգվել են ցանքը, բերքահավաքը, կալսումը, ինչպես և այդ անդրադեմ կոլխոզային արժեքի վրա։ Թերթերը պիտք ե աշխատանքն արդեկառող մարդկանց դեմ հասարակական կարծիք ստեղծեն, ովնեն նրանց շուտով ազատվելու հին սովորություններից և դառնալու սոցիալիստական հասարակության գիտակից կառուցողներ։

Կուսակցությունը և կառավարությունը մեզ զինել են հիանալի զենքով — «Կոլխոզնիկների հանրային հողերը շուալումից պահպանելու միջոցառումների մասին» վորոշումով։ Այդ վորոշման մեջ տրված ե կոլխոզային կարգերի հետագա ամրապնդման բոլշևիկյան ծրագիրը։ Վորոշման մեջ մարմնացած են ստավինյան ցուցումներն այն մասին, վոր կոլխոզնիկներին ամենոր կոլեկտիվիզմի վոգով, կոլխոզային կանոնադրությունն անշեղորեն պահպանելու, ջախչախսված կուպակության մնացորդների կողմից կոլխոզները բերվող մասնավոր - սեփականատիրական, բոլորության տրամադրությունների դեմ վճռական պայքարի վորով գաստիարակելու հիման վրա միայն հնարավոր ե հաղթահարել կապիտալիզմի մնացուկները մարդկանց գիտակցության մեջ և բոլոր կոլխոզնիկներին դարձնել սոցիալիստական հասարակության գիտակից աշխատողներ։

Այդ վորոշման իրականացման գործում կոլխոզային մամուկի գերը հսկայական են Կոլխոզային և բրիգադային յուրաքանչյուր թերթի վճռական խնդիրն ե՝ ամեն որ, համառ պայքար մղել

Հեկտարը հացահատիկայինների 60-70 և նույնիսկ 100 ցենտներ բերք է տալիս: Հողին ձեռք են կպցրել ազատ աշխատողները, սոցիալիզմի կառուցման ենոտութիւնները, և հողն սկսել է հրաշքներ գործել:

ՀամԿ(թ)Կ կենտրոնական Կոմիտեն և ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիտարների Խորհուրդը պալուղման մեջ նշված բոլոր միջոցառումների կենսագործման համար: Ձիշտ չեն վարչել մի շարք կոլխոզային թերթերի խմբկունիվաներ, վորոնք մի շարք թղթակցություններ տպելով այդ թեմայի շուրջը, դրանով հանգստացել են: Պետք է հասկանալ, վոր խոսքը վոլ թե կարճատել կամպանիայի, այլ վճռողական, գլխավոր խնդրի մասին ե, կոլխոզների հետագա ամրացման և գյուղում ունելող, կուլտուրական կյանքի ծաղկման ստալինյան ծրագրի մասին ե:

Պատի թերթերը պետք է լայնորեն ու սիստեմատիկաբար, տեղական կյանքից վերցրած որինակներով բացատրեն կոլխոզներին ու կոլխոզնիկութիւններին «Կոլխոզների հանրային հողերը շոայլումից պահպանելու միջոցառումների մասին» կուսակցության և կառավարության վորոշման պատմական նշանակությունը, նրանցից յուրաքանչյուրի գիտակցությանը հասցնեն կուսակցության XVIII համագումարի հետեւյալ ցուցումը՝

«Կոլխոզային շինարարության մեջ խնդիրները կյանքում են գյուղատնտեսական արտելի հետագա կազմակերպական - տնտեսական ըստամենայնի ամրացման մեջ, կոլխոզի հանրային սեփականության զարգացման ու ամրացման մեջ, կոլխոզային անասնաբուժական ֆերմաների, հանրային շենքերի, հանրային ապահովագրական ֆոնդերի և կոլխոզային սեփականության մյուս տեսակների զարգացման մեջ, վոր հանդիսանում ե գյուղական տնտեսության և կոլխոզային գյուղացիության կյանքի նյութական ու կուլտուրական մակարդակի հետագա վերելքի հիմքը»: (Համ. Կ(թ)Կ XVIII համագումարի բանաձեն ընկ. Մոլոտովի գեկուցման առթիվ):

Պատի թերթը պետք է ամեն կերպ ձգտի հանրային տնտեսության ամրացմանն ու լայնացմանը:

Անհրաժեշտ է ամենից առաջ լավ յուրացնել, վոր հողը, վորը սոցիալիստական պետությունն առհավետ ամրացրել և կոլխոզներին, կոլխոզնիկների բարեկեցության հիմքն և հանդսանում: Այդ պատճառով անթուղատրելի յե հողի բարբարության ուժապարծումը, այն ուժասպան անելը:

Կոլխոզային կարգերը դաստիարակել են շատ հաղարավոր մարդկանց, վորոնք շտեսնված բերք են ձեռք բերել: Հողի մի

Պատի թերթերում հաճախ հանդիպում են կուսակցին արտադրության հիանալի կազմակերպիչներ ու առաջավորներ: Հարկավոր է ավելի շատ գրել նրանց մասին, աշխատանքի նրանց պրոմեների մասին և հետեւյալ դաստիարակել, առաջ մղել հետ մնացողներին:

Պատի թերթերում հաճախ հանդիպում են վատ աշխատող բրիգադին, ողակին, ֆերմային քննադատող թղթակցություններ:

Զգալիորեն ավելի ստեղ են հանդիսանում այնպիսի թղթակցություններ, վորոնք բացահայտում են դրանց հետ մնալուն հասցնող պատճառները:

Խմբկոլեգիաները պետք ե հաշվի առնեն, վոր թերթը պետք ե վոչ միայն թերթյունները քննադատի, այլև ցուց տա, թե ինչպես կարելի յե դրանք վերացնել:

Դյուլատնտեսական արտելի կանոնադրության մեջ պարզ և ուղղակի շարադրված են կոլխոզային գործունեյության կարեվորագույն հիմունքները: Կանոնադրությունը գույքակցում է կոլխոզնիկների հանրային ու անձնական շահերը, սահմանում է կոլխոզային կարգերի հետագա ամրացման ու զարգացման ուղիները: Կանոնադրության խստիվ պահպանումը կարենվորագույն պայմանն է կոլխոզներում ունենալու և կուտարական կյանքի լիակատար ծաղկման հասնելու համար:

Կոլխոզային պատի թերթի և գյուղատնտեսական արտելի կանոնադրության պահպանմանը: Այնտեղ, որինակ, ասված ե, թե կարեվորագույն տնտեսական հարցերը պետք ե վճռվեն կոլխոզնիկների ընդհանուր ժողովի կողմից, վորտեղ պահանջվում է արտելի անդամների կեսից վոշ պակասի ներկայությունը, իսկ արտելի վարչության և նախագահի ընտրությունների ժամանակ, նույնպես և մի քանի ուրիշ կարեվորագույն հարցեր վճռելիս — անդամների յերկու յերրորդի ներկայությունը: Վոշ բոլոր կոլխոզներում է կատարվում կանոնադրության այդ կետը: Վորոշ տեղեր վարչության անդամները վարչարարություն են անում, արտելի ունեցվածքի վրա կարգադրում են ինչպես խելքները կիչի, մոռանալով, վոր ընդհանուր ժողովը հանդիսանում է կոլխոզի կառավարման գերագույն որգանը:

Կոլեկտիվ տնտեսությունը վարելու գործում արտելի բոլոր անդամների ակտիվ մասնակցությունը կոլխոզնիկներին կոմունիստական վորով դաստիարակելու հզոր միջոցն է հանդիսանում: Այդ պատճառով կոլխոզային պատի թերթերը պետք ե ձգտեն կոլխոզային դեմոկրատիայի աշխատավաճառական առնենած գյուղատնտեսական արտելի կանոնադրությունը:

Կանոնադրությունը, ինչպես արդեն ասված ե վերև, գույքակցում է կոլխոզնիկների հանրային ու անձնական շահերը:

Այժմ, յերբ կոլխոզներն ամրացել են, կոլխոզնիկների անձնական տնտեսությունը պետք է ավելի ու ավելի նեղ-ոժանդակ բնույթ կրի, իսկ հանրային տնտեսությունն ամրանա և աճի վորպես հիմնականը: Կոլխոզային պատի թերթերն ու գյուղթղթակիցները պետք ե պայքարեն կոլխոզի հանրային տնտեսության լայնացման ու ամրացման համար, ագրոկանոնների պահպանման, բուտախանովյան պրակտիկայի լայն ոգտագործման և տարածման համար: Յերբեմն այնպես ե լինում, վոր գոմաղրի գգալի մասը գործադրվում է տնամերձ հողամասերը պարարտացնելու համար, իսկ կոլխոզային դաշտերին չի բավականանում: Թերթը պետք ե պարարտանյութերը հավաքելու և կոլխոզի դաշտերը փոխադրելու բոլցեկիցան կազմակերպիչը դառնա, աշխատի, վոր գրանք ճիշտ պահպանվեն և ոգտագործին: Լավ կլիներ պատի թերթում ստեղծել առավել կարեվոր ագրոկանոնները պարզաբանող մի քանի հոդված: Դյուլատնտեսի, ուսուցի ոգնությամբ կարելի յե հաշվել, թե բերքին ինչ ավելացում են տալիս ձնապահպանմը, սերմացուի զտումը, քաղանց և այլն, թե այդ ավելացումն ինչպես կանդրադառնա աշխարի արժեքի բարձրացման վրա:

Անամսաբուժական ապրանքային ֆերմաների ստեղծումն ու նրանց աշխատանքի բարեկավումը, անամսաբակերի, ախոռների կառուցումը, կոլխոզային այգեգործության, մեղվարուծության և արտելային տնտեսության մյուս ճյուղերի կազմակերպումը — այդ բոլոր և ուրիշ շատ հարցեր կարող են բարձրացվել պատի թերթում, հենվելով կոլխոզային առաջավոր ակտիվի վրա:

Տեղական կոլխոզային կյանքից վերցրած փաստերով ու թվերով թերթը պետք ե համոզի կոլխոզնիկներին, վոր նրանց անձնական բարեկեցության, նրանց ունենալու կյանքի հիմքն անխղելիորեն կապված է հանրային կոլխոզային տնտեսության հետ:

Կոլխոզային մամուլն իր ամբողջ յեռանդը պետք ե գործադրի հանրային տնտեսության զարգացման, աշխատանքային կարգապահության ամրապնդման համար: Նա պետք ե ժամանակին ազգանշանի առանձին անդիտակից կոլխոզնիկների փորձերի մասին, վորոնք աշխատում են իրենց անձնական տնտեսու-

թյունն աճեցնել ի վնաս հանրայինի: Հարկավոր ե վճռականապես քննադատել նրանց, ովեր, թագնվելով կոլխոզների անվան տակ, խախտում են գյուղատնտեսական արտելի կանոնադրությունը, սահմանված նորմաներին գերազանցող քանակությամբ անասուններ են պահում, անփուշ են վերաբերվում հանրային, կոլխոզներին ունեցվածքին, խախտում են աշխատանքային կարգապահությունը:

«Ակաբրյոդ» պատի թերթը (Սոմսկի մարզի թերոպոլսկի շրջանի չջերվուսա Ռեկրայինա» գյուղատնտեսական արտել) կոլխոզների արժանավայել հեղինակությունն ե վայելում: Նա համարից համար ցուց ե տալիս, թե ինչ ե տալիս ազնիվ աշխատանքը կոլխոզում: Խմբկոլեգիան հրապարակել ե առաջարկոր կոլխոզների ցուցակը և նշել, թե նրանցից յուրաքանչյուրն իր վաստակած աշխատերի դիմաց վորքան կտտանա: Նա հաշվել ե նաև, թե վորքան ե կորցրել կոլխոզն այն մարդկանց պատճառով, վորոնք իրենց անձնական շահերը հանրայինից պեկի՞ բարձր են դասում: Այդ նյութը զետեղված ե յեղել պատի թերթում և կոլխոզների վրա մեծ տպավորություն ե թողել:

Մարտի 8-ի անվան գյուղատնտեսական արտելում (Խարկովի մարզի Լոզովսկու շրջան) այսպիսի մի գեպք պատահեց: Արտելի անդամներից մեկը հրաժարվել եր կոլխոզային աշխատանքից: Այդ մասին գրել եր պատի թերթը: Մի քանի որից հետո այդ կոլխոզնիկը մի նամակով դիմում ե պատի թերթին: Նա գրել ե.

«Մեր թերթը սուր գրում ե վատ գործերի համար և խըրախուսում լավի համար: Ահա, որինակ, ինձ ևս մի անգամ պատի թերթում քննադատեցին նրա համար, վոր յես հրաժարվել եի պարան գործել կոլխոզի համար: Ինձ համար շաա ամոթ եր, յերբ յես պատի թերթում տեսա իմ ծաղրանկարը, վորի տակ գրված եր. «Նա չի ուզում ոգնել կոլխոզին», Յես մտածեցի ել ինչու բարկանալ, թերթը ճիշտ ե գրել: Յես վորոշեցի գործի կայչել սկսեցի աշխատել վորքան կարելի յե ավելի լավ:

Կոլխոզում յես աշխատում եմ վազուց: Ինձ պարան գործելու մասնագետ են համարում, բայց առաջ վոլ վոր

վոլ մի անգամ ինձ իմ աշխատանքի համար չի գովել: Մի անգամ մտնում եմ ակումբ, տեսնեմ — կախված ե պատի թերթի թարմ համարը: Ավելի յեմ մոտենում, նայում առաջին ցուցակին և կարգում, — իմ մասին գրում են, վոր թեպետ ծեր մարդ եմ, բայց գործի յեմ ձեռնարկել յերիտասարդի նման: Նա, իբր, 150 մետրի փոխարեն գործում ե 250 մետր պարան:

Դա ինձ շատ ուրախացրեց: Այդ որվանից յես մի յերազոնեմ՝ քանի ուժ կա, կաշխատեմ ավելի լավ: Վերջերս պատի թերթի ոգնությամբ ինձ, վորպես կոլխոզի առաջավոր, գրել են պատվո կարմիր տախտակին»:

Բազմաթիվ որինակներ կարելի յե բերել, թե ինչպես պատի թերթերը բարոյական մեծ ազդեցություն են ունենում իրենց ընթերցողի վրա, ոգնում են նրան՝ հաղթահարել կապիտալիզմի մնացուկները գիտակցության մեջ:

Որինակ, անպիսի մի դեպք ե յեղել «Գոլոս» ամենորյա պատի թերթի խմբկոլեգիայի աշխատանքի պրակտիկայում (Սոմսկի մարզի Շոստկինսկի շրջանի Բոգդանովկա գյուղի կոլտնտեսություն): Կոլխոզնիկներից մեկը կոլխոզի բանջարեղենի պահեստից սանդուխը տարել եր իր տուն: Կոլխոզնիկուհիները գալիս են կարտոֆիլն ընտրելու համար և սանդուխը գտնելու համար կորցնում են 50 րոպե:

— Պահ, մեծ բան ե՝ 50 րոպե կորցնելը, — կասեն վոմանք: Իսկ պատի թերթը ճիշտ ե գնահատում այդ փաստի կարևորությունը: Այդ 50 րոպեն բազմապատկելով անգործ մնացած կոլխոզնիկների թվի վրա, նա ցուց ե տալիս, թե անփուշ կոլխոզնիկը վորքան ժամանակ ե լալել գյուղատնտեսական արտելից: Թերթն այդպես հմտորեն կոլխոզնիկներին դաստիարակում ե կոլեկտիվ աշխատանքին սիրով վերաբերվելու վոգով:

Ստորին մամուլը շափազանց քիչ ե ուշադրություն հատկացնում կրոնական նախապաշտումունքների դեմ մղվող պայքարին: Այնինչ այդ նախապաշտումունքները մարդկանց գիտակցության մեջ կապիտալիզմի ամենաարմատացած և կենսական մնացուկներն են հանդիսանում: Դասակարգային թշնամիների մնացուկներն ամեն կերպ շանում են մարդկանց կրոնական տրամադրու-

թյուններն ոգտագործել աշխատավորների դեմ, սոցիալիզմի դեմ, իրենց մղած պայքարում; Յեռուա աշխատանքի որերին նրանք շանում են կոլլուգնիկներին շեղել՝ կրոնական տոներ սարքելու համար; Դրա հետևանքով կոլլուգները նյութական վնասներ են կրում; Խմբկոլեգիաների համար դժվար չե հաշվել, թե կոլլուգին ինչ են արժենում տոնական պրոդուկները, ցուց տալ, թե ինչպես են շահուա այդ տոների ժամանակ տերտերները; Յեկ միայն դրա մեջ չե կայանում կրոնի հասցրած շարիքը; Կրոնական մնացուկները նվաստացնում են խորհրդային մարդու արժանապատվությունը, նրա մեջ դաստիարակում են պասիվություն, կազմագրություն, խանգարում են ստեղծագործական յեռանդի ու նախաձեռնության ծավալմանը, բթացնում են քաղաքական զգոնությունը և ատելությունը դասակարգային թշնամիների նկատմամբ, հարմար պայմաններ են ստեղծում թշնամական տարրերի ստորգործունեցության համար;

Պատի մամուլը պետք է իրեն արժանի տեղը գրավի մարտընչող հակակրօնական պրոպագանդայի ընդհանուր սիստեմում; Պատի թերթի խմբկոլեգիան կարող է մեծ ոգնություն ցուց տալ Մարտնչող անաստվածների միության տեղական կազմակերպություններին, սերու կապ սահմանելով նրանց հետ, կանոնավոր կերպով թղթակցություններ զետեղելով հակակրօնական թեմաների շուրջը:

Կույրիշև քաղաքի նախկին 61-րդ ընտրական տեղամասում 1938 թվականի դեկտեմբերից լույս ե տեսնում տնային տնտեսությունների պատի թերթը; Նա կոչվում է «Քեզբոժնիկ» վ բըտուա: Ակտիվիստ կանայք մեծ կուլտուրական գործ են կատարում: Պատի թերթը մեծ հեղինակություն ե վայելում իր ընթերցողների մեջ: Նրանցից շատերին նա օգնել ե խզել կրոնի հետ:

«Քեզբոժնիկ» վ բըտուա պատի թերթում զետեղվող թղթակցությունները, հագեցած կենցաղային ճշմարտությամբ, կրոնի վնասակարության, յեկեղեցականների ստոր գործունեցության մասին գրված պարզ ու անկեղծ խոսքերը մեծ տպափորություն են թողնում: Այդ թերթի ուժը հենց այն ե, վոր նա հակակրօնական պրոպագանդայի մղում վոշ թե ընդհանուր, վերացական դաստողություններում, այլ իսկական փաստերով և որինակներով:

Թոշակառու ընկ. Զուղնիկովան իր թղթակցության մեջ հին ժամանակ պատահած մի այսպիսի դեպք եր պատմում: Մի բանվորի բնակարանում բոլցելիկների ընդհատակյա կազմակերպությունը զենք եր պահում: Այդ բանվորի մայրը գնում է տերտերի մոտ խոստովանքի և նրան պատմում զենքի մասին: Տերտերն շտապում եր այդ մասին հայտնել ժանդարմներին: Բանվորը ձերբակալվում ե, գենքը խլվում: Ընկ. Զուղնիկովայի հասարակ թղթակցությունը վառ կերպով ցուց ե տալիս հոգեվորականության պրովոկատորական, լրտեսական գործունեցությունը:

«Քեզբոժնիկ» վ բըտուա թերթը տնային տնտեսություններից գանգան հարցեր ե ստանում — ինչպես ե առաջ գնացել մկուտության ծեսը, ինչու համար են կովիչ թխում, կրոնական տոների մասին: Այդ բոլոր հարցերին խմբկոլեգիան թերթում պարզ, հականալի պատասխաններ ե տալիս:

Պատի թերթերի խմբկոլեգիաները պետք ե հետեւն, թե ինչպես են հակակրօնական պրոպագանդա տանում ակումբը, խըրծիթ - ընթերցարանը և մյուս կուտ - լուսավորական հիմնարկությունները, ոգնեն նրանց այդ աշխատանքում: Կայացած հաջող դասախոսության կամ զրուցի մասին կենդանի թղթակցությունը կոնի հետեւյալ հակակրօնական դասախոսությանը նորունկնդիրներ ներգրավելու: Թերթը կարող է և պետք ե դեպի հակակրօնական թանգարաններն եքսկուրսիաներ կազմակերպելու, գիտական գեկուցումներ դնելու նախաձեռնողը հանդիսանա և և այն:

Պատի թերթերը և բանգյուղթղթակցները պետք ե աշալըրշորեն հետեւն յեկեղեցականների, աղանդավորների գործունեցությանը՝ նրանց յելույթներն ու պղովոկացիաները ժամանակին մերկացնելու համար: Պատի թերթում պետք ե ցուց տալ, թե ժողովրդի ստոր թշնամիները, կապիտալիստական պետությունների գործականներն ինչպես են յեկեղեցին ոգտագործում իրենց պայքարում՝ ընդդեմ աշխատավորների, ընդդեմ սոցիալիզմի յերկըրի:

Մեծ ե պատի թերթի դերը կրոնական ծեսերի, սնոտիապաշտությունների և այլ բաների դեմ մղվող պայքարում: Ուսուցչի, թժշկի, մանկաբարձուհու, գյուղատնտեսի կարճ, տեղական փաս-

տերի վրա հիմնված հոդվածը մինչև այժմ կրոնական նախապաշտամունքների հետ շխղած աշխատավորներին կարող ե ոգնել ավելի արագ ազատվելու այդ հոգեվոր գերությունից և վերջ տալու սնուափաշտություններին ու կրոնին:

Հակակրոնական գործունեյաւթյան հետաքրքիր, գրական փորձի ցուցադրումը, Մարտնչող անաստվածների միության թույլ աշխատող բջիջի քննադատությունը պատի թերթերի լուրջ խընդիրներից մեկն են հանդիսանում:

ԱՐԹՈՒՆ ՊԱՀՊԱՆԵԼ ՅԵՎ ԱՄՐԱՑՆԵԼ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Պատի թերթերը և բանգյուղթղթակիցները հատուկ ուշադրություն պիտի դարձնեն Հանրային, սոցիալիստական սեփականության պահպանմանն ու ամրացմանը: Կոլխոզային հողերի շռացում պետական և կոլխոզային բարիքի փչացում ու հափշտակում — այդ հանցագործություններին և հաճախ թշնամին դիմում իր ստոր միտումներով՝ մեր յերկրին վնաս հասցնելու համար:

Խորհրդային Միության տնտեսական հիմքն են հանդիսանում տնտեսության սոցիալիստական սիստեմը և արտադրության գործիքների ու միջոցների սոցիալիստական սեփականությունը: Ստալինյան Սահմանադրության 131-րդ հոդվածում ասվում է, վոր սոցիալիստական սեփականությունը խորհրդային կարգերի սրբազն ու անձեռնմիելի հիմքը, հայրենիքի հարստության ու հզորության աղբյուրը, բոլոր աշխատավորների ունեվոր և կուտուական կյանքի աղբյուրն ե հանդիսանում: «Հանրային, սոցիալիստական սեփականության վրա ձեռք բարձրացնող անձեռը ժողովրդի թշնամիներ են հանդիսանում»: Ուստի ԽՍՀՄ յուրաքանչյուր քաղաքացու պարտականությունն ե՝ արթուն պահպանել և ըստամենայնի ամրացնել սոցիալիստական սեփականությունը:

Պատի մամուլը, վորն աշխատավորների կոմունիստական դաստիարակության գործիքն ե հանդիսանում, պետք ե կռնկրետորինակներով և փաստերով բացարի աշխատավորներին հանրային, սոցիալիստական սեփականության դերը, բանվորներին, կոլտնտեսականներին, ինտելիգենցիալին դաստիարակի ժողո-

Քրողական բարիքին խնամուտ, վերաբերմունք ցուց տալու վո-
գով, նրանց բացատրի սոցիալիստական սեփականությունն աշ-
քի լույսի պես պահպանելու անհրաժեշտությունը:

Հարկավոր և ամենորյա պայքար տանել անտնտեսավարու-
թյան և շուալլության դեմ, վորոնք հսկայական վնաս են հասցը-
նում մեր ընդհանուր գործին: Արտադրական պատի թերթերը
պետք ե վճռականապես հանդես գան սարքավորման, հումույթի,
կիսաֆարբիկատների նկատմամբ բարբարոսական վերաբերմուն-
քի դեմ: Եատ գործարաններում ու ֆաբրիկներում թափած են
հսկայական քանակությամբ գլատաշեղ և գումավոր մետաղի,
պողպատի ուրիշ մնացորդներ և այլն: Պետական այդ արժեքա-
վոր բարիքը փշանում է, զուր տեղը կորչում: Նա, ով ստանոկ-
ներն ու մեքենաները կեղտու ե պահում, ով դրանք թողնում է
շլուղած և շմաքրած, նա կարճացնում է դրանց դարր:
Վատ կիտված հոմովլիք, կիսաֆարբիկատները, յերեմն և մե-
քենաները կոխկութվում են, հափշտակվում: Պատի թերթերը
պետք ե ամուր պայքարեն այդպիսի անտնտեսավարության դեմ:
Նրանք պետք ե աշխատավորներին բացատրեն, վոր յուրաքան-
չուր պահպանված պտուտակ ոգուս ե բերում Խորհրդային Մի-
ության բոլոր աշխատավորներին, վոր հանրային սեփականու-
թյան պահպանումը մեր յերկրում կոմոնիդմի կառուցման
պատմական խնդրի կատարման կարեվորագույն պայմաններից
մեկն ե հանդիսանում:

Թյազանի մարզի Մոժարսկի ՄՏ կայանի «Ստախանովեց»
պատի թերթը խիստ կերպով հանդես ե գալիս մեքենաներին և
կոլուղատնտեսական ինվենտարին անտնտեսավար, անփուլթ վե-
րաբերվելու դեմ:

«Ընկեր Ստախինը, — զրում ե թերթը, — Հարվածային
կոլխոզների Համամիութենական առաջին համագումա-
րում հատուկ ուշադրություն ե դարձել մեքենաներին խնամ-
քութ վերաբերվելու անհրաժեշտությանը: Այնինչ մեր մեքե-
նատրակտորային կայանն այդ ցուցամներն անբավարար է
կատարում:

Որես ՄՏ կայանում ստացվել ե Ռւ—Զ մարկայի 6
տրակտոր, վորոնցից յերկուսը փոխադրվել են ՄՏ կայանի

բակը, բայց չեն սարքվել և ծածկվում են ձյունով, իսկ
շորս տրակտորը մինչև այժմ մնում են կայարանում՝ յեկ-
բաց յերկնքի տակ: Նույնպիսի վիճակում ե գտնվում և վե-
րանորոգված գութանների մի մասը:

Ժամանակն ե, վոր ավագ մեխանիկը (թերթում ցուց
ե տրված ազգանունը) վերջապես հասկանա, վոր պետք ե
մեքենաներին խնամքով վերաբերվել և պահել լավ շենքե-
րում, և վոլ թե ձյան մեջ ու բաց յերկնքի տակ»:

Կոլխոզային պատի թերթերը և գյուղթղթակիցները պետք ե
ձգտեն հանրային ունեցվածքը հափշտակումից և փշացումից
պահպաննելուն:

Հրդեհները, հատկապես գյուղերում, մեծ վնաս են հասցը-
նում պետությանը, կոլխոզներին, առանձին քաղաքացիներին: Այնինչ մի շաբաթ տեղեր հակահրդեհային միջոցառումներին շա-
փազանց անբավարար ուշադրություն ե դարձնվում: Զրամբար-
ները և դրանց ձակատամուտքերը հաճախ աշքաթղող են արված: Յե-
թե հրդեհ պատահի կրակը վոչնչով չես հանգցնի: Հրդեհաշեց
մեքենաներն առանց փողակների յեն, սալլերի անիվները շորա-
ցել են, — դժբախտաբար այդպիսի պատկեր կարելի յե հան-
դիպել առանձին կոլխոզներում:

Հրդեհներն առանձնապես վտանգավոր են բերքահավաքի
ժամանակ, վորովհետև սովորաբար այդ ժամանակ չոր յեղա-
նակ ե լինում: Անհոգությունը, բերանքացությունը կարող են
բերքը, ֆերման, գոմը կրակի բաժին դարձնել և հենց այդպիսով
մեծ վնաս հասցնել հանրային անտեսությանը:

Պատի թերթերը պետք ե ձգտեն որինակելի գրության հաս-
ցնելու հակահրդեհային գործը ձեռնարկություններում և կոլխոզ-
ներում, քննադատեն անհոգ և անփուլթ զեկավարներին, վորոնք
վատ են հոգում ժողովրդական բարիքի պահպանման համար:

Պատի մամուլը և բանգյուղթղթակիցները հարգանքով պետք
ե շրջապատեն այն բանվորներին, կոլխոզներին, խորհրդային
ինտելիգենտներին, վորոնք առանց նայելու վտանգին, կորստից
փրկում են պետական, հանրային բարիքը: Մեր թերթերը թիչ
դեպքեր չեն հաղորդում, յերբ պահպանը չի թողնում իր դիր-
քը, թեպետ նրա բնակարանը բռնված է հրդեհով: Հովիվները,

շոքանները, չնայած մահացու վտանգին, բուքի ժամանակ պահպանում են կոլխոզային և պետական անասուններին: Կյանքը վտանգելով՝ մարդիկ նետվում են վառվող գոմը՝ այնտեղից ձիերը դուրս հանելու համար: Ալզափիսի մարդիկ կան ամեն տեղ, այդպիսի հերոսներ կան ամեն մի կոլխոզում, յուրաքանչյուր ձեռնարկությունում: Նրանց մասին պետք ե գրել, նրանց պետք ե շրջապատել փառքի պսակով: Պատի մամուլն այդպիսի փաստերով աշխատավորների մեջ պետք ե դաստիարակի նվիրվածություն հայրենիքին, հերոսություն, խնամութ, հոգատար վերաբերմունք դեպի հանրային բարիքը, վորպես սոցիալիստական պետության անխախտ հիմքի:

Ամեն մի որը մեզ բերում ե հանրային բարիքի նկատմամբ սիրով, խնամութ վերաբերմունքի ամենավառ որինակներ: Մեր կյանքը լի յե խորհրդային քաղաքացիների հիանալի վարմունքներով, վորոնց նպատակն ե բազմապատճել հայրենիքի հարստությունները, ամրացնել նրա հզորությունը և փառքը: Բայց յերեմն դեպքեր են լինում, յերբ մարդ, տեսնելով, վոր պետական, կոլխոզային բարիքը փշանում ե, կորչում ե, սառնասրութեն անցնում ե կողքից: Այդպիսի փաստերը, իհարկե, բնորոշ չեն մեր իրականության համար: Այնուամենայնիվ չի կարելի յուրաքանչյուր հակածանքին այնպիսի վարմունքը, վորոք բացատրվում ե նրանով, վոր մարդկանց մի մասի գիտակցության մեջ դեռ կենդանի յեն կապիտալիզմի մնացուները: Պատի թերթերը և բանցուղթիթեակիցները պետք ե որինակներով ու փաստերով ցուց տան աշխատավորներին, վոր սոցիալիստական սեփականության խնայումը նրանց հարազատ գործն ե, վոր նրանցից յուրաքանչյուրի բարեկեցությունը կախված ե պետական, հանրային բարիքի պահպանումից և բազմապատճեմից:

Միւնուվն ժամանակ մամուզը և բանցուղթիթեակիցները պետք ե համարձակորեն և վճռականությամբ մերկացնեն հանրային, սոցիալիստական սեփականությունը հափշտակողներին, աշխատեն նրանց դաժան պատասխանատվության յենթարկելու, վորպես մողովորդի ամենակատաղի թշնամիների:

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՆՈՐ ՀԱԶՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Սոցիալիզմի հաղթանակների շնորհիվ մեր յերկրի եկոնոմիկան արմատապես փոխվել է: Ընդմիջությունը վոչնչացված ե մարդու շահագործումը մարդու կողմից: ԽՍՀՄ-ում աշխատավոր մասսաներն ապրում են յերշանիկ, ոմնելոր կյանքով, աշխատում են իրենց համար, իրենց սոցիալիստական հայրենիքի համար: Ստալինյան հնգամյակների իրագործումը մեր արդյունաբերությանը և գյուղական տնտեսությանը զինել ե առաջնակարգ տեխնիկայով: «Մեր հասարակության հետագա վերելքի և լիակատար ծաղկման համար մեզ մոտ ստեղծված են այնքան հեռանկարներ, այնքան հնարավորություններ, վոր այժմ մեզ մոտ գիտավորը կայանում ե իր աշխատանքի նկատմամբ կոմունիստորեն, գիտակից վերաբերմունքի մեջ և առանձնապես խորհրդային ինտելիգենցիայի աճած կադրերի գաղափարական դաստիարակության ուղղությամբ մեր բոլցեկիցան աշխատանքի հաջողության մեջ»: (Մոլոտով: Ձեկուցում Համկ(բ)կ ԽVIII համագումարում):

Խողորագույն, արմատական փոփոխությունները մեր եկոնոմիկայում, մեր յերկրի սոցիալիստական վերաբերատումը փոփոխություն են առաջ բերել իրենց՝ մարդկանց, նոր սոցիալիստական հասարակության ստեղծագործողների մեջ: Փոփոխությունը ե գիտակցությունը, վերաբերմունքը դեպի աշխատանքը, մշակվում են նոր հայացքներ, ստեղծվում ե նոր, կոմունիստական կենցաղ, մշակվում ե նոր բնավորություն, սոցիալիզմի յերկրի ազատ բաղաքացու բնավորություն, բաղաքացի, վորը լի յե պատասխանատվության զգացմունքով, սովորությներից և մնացորդներից ազատված սեփական պետության առջև:

Իր հերթին կոմունիստական գիտակցականության աճումը, կուստուրական հեղափոխության հաջողություններն արագացնում են մեր հայրենիքի տնտեսական զարգացումը, նպաստում են աշխատանքի արտադրողականության հետագա վերելքին: Այդ պատճառով պատի թերթերը և բանգյուղթիթակիցները պետք են գննեն աշխատավորներին սոցիալիստական կուստուրայի հետագա ծաղկման, նոր, խորհրդային կենցաղի ամրացման, նոր մարդու կոմունիստական հասարակության գիտակից կառուցողի դաստիարակության համար նրանց մզած պայքարում:

Մեծ են մեր հաղթանակները կուստուրական ֆրոնտում: Դաստիարակվել են խորհրդային ինտելիգենցիայի հիանալի կազմեր, վորի բանակը հասնում է ավելի քան ինն ու կես միլիոն հոգու թերորդ հնգամյակում պետք է իրագործվի ընդհանուր միջնակարգ ուսուցումը քաղաքում և ավարտվի ընդհանուր յոթնամյա ուսուցումը գյուղում: Աճում է գիտական հիմնարկությունների, թատրոնների, ակումբների, ընթերցարանների, գրադարանների, կուստուրայի տների ցանցը:

Բայց կուստուրական ֆրոնտի այդ հսկայական հաջողությունները չպետք է ինքնահանգատացման հասցնեն: «Կուստուրայի բնագավառում սոցիալիզմի վերջնական հաղթանակի մասին խոսելը դեռ վազ է: Դրա հետ կապված է այն փաստը, վոր մեզ մոտ դեռ այնքան աշխատանք կա կապիտալիզմի մընացուկները մարդկանց գիտակցության մեջ վերացնելու համար: Դրանք կարելի յե հաջողությամբ վերացնել սոցիալիստական կուստուրայի լայն վերելքով միայն: Բայց դրա փոխարեն իսկական սոցիալիստական կուստուրայի ուղիղվ յուրաքանչյուր քայլը վոչ միայն իր անմիջական արդյունքներն ե տալիս, այլև սոցիալիզմը կոմունիզմի վերածելու նախադրյալն ե ստեղծում»: (Մոլոտով):

Պատի թերթերի խմբութեգիաները և բանգյուղթիթակիցները պետք ե մշտապես հետաքրքրվեն, թե ինչպես ե տարվում կուստուր-քաղաքական աշխատանքը, շանան նրա ըստամենայնի ծավալման համար: Ակումբների, գրադարանների, դպրոցների, խմբակների գործունելությունը պետք ե սիստեմատիկաբար լուսաբանվի պատի թերթում: Զետեղելով համապատասխան թըղթակցություն, պատի թերթը կողմի հետաքրքրություն առաջա-

նելու լավ գրքի, թատրոնական բեմագրության, կինոնկարի նըկատմամբ:

Կովսկի մարզի Շեքեկինսկի շրջանի «Պարտիզան» կոլխոզի «Վաղերյող» ամենորյա պատի թերթը 400 տեղ ունեցող ակումբի կառուցման նախաձեռնողն ե յեղել:

Ստալինգրադի մարզի Նովո-Աննենսկի շրջանի Գորկու անվան կոլխոզի «Գոլոս ստախանովցա» պատի թերթը հաջողացրել ե կոլխոզի կարմիր անկյան ուղինոֆիկացիան և կահավորումը:

Լ. Մ. Կագանովիչի անվան «Շարիկովոդշիպնիկ» գործարանի պատի թերթերը մի շարք շատ հետաքրքիր հարցեր են բարձրացնում: Այսպես, «Եվլումատշիկ» ամենորյա պատի թերթը սիստեմատիկորեն «Նոր գրքեր» բաժին ե տալիս, վորտեղ պատմում ե գրքի շուկայի նորությունների մասին: Համարներից մեկում նա հայտնում է, որինակ, վոր Մոսկվայում ցուցահանդես ե բացվել, նվիրված «Ըլուօ ո ոլկո Իգորեվ» հին-ռուսական եպոսի հանձնարեկ ստեղծագործությանը:

Այդ նույն գործարանի «Սիգնալ» թերթը պայքարում ե արտադրության հրամանատարների և շրբային բանվորների կուտուր-տեխնիկական մակարդակի բարձրացման համար:

Այսպես, իր համարներից մեկում նա պատմում է նորոգամեխանիկական ցեխի ստախանովական խառատ ընկ. Մ. Ֆոմիչյովի մասին: Նրան հանձնարարվել եր բարդ սեպարատորներ պատրաստել: Այդ աշխատանքն ընկ. Ֆոմիչյովն առաջ կատարած չեր: Այնուամենայնիվ նա հենց առաջին որն աշխատանքը լավ յուրացնում ե և պատրաստում 250 սեպարատոր: «Ճեխում վոյ վոք դեռևս այդպիսի արտադրանք չեր տվել», — գրում ե թերթը: Այնուհետև ընկ. Ֆոմիչյովը նոր նվաճում ե ձեռք բռում, արտադրելով 280 սեպարատոր:

Դրա կողքին զետեղված ե մի ուրիշ թղթակցություն ռուսաման գերազանցիկ» վերնագրով: Դրա մեջ պատմվում ե դարձյալ ընկ. Ֆոմիչյովի մասին:

«Ընկ. Ֆոմիչյովի բնորոշ գիծն ե՝ անշեղորեն ձգտել աշխատանքի կուստուրային, ընդհանուր կուստուրային: Նա անընդհատ սովորում է, բարձրացնում ե իր մտահորիզոնը: Սոցիալիստական աշխատանքի վարպետների դասընթացնե-

րում, վոր նա ավարտել ե այս տարի գերազանց, ընկ. Ֆումիշովը միանգամից անցել ե լավագույնների շարքը և իր վրա դարձրել խառաւաների ուշակրությունը:

Աշնանը նա մտել ե Զերժինսկու անվան մեքենաշինական տեխնիկումը և այստեղ ևս տեղ գրավել լավագույն սովորողների շարքում»:

Ինչպես յերեսում ե, առաջին և յերկրորդ թղթակցությունների միջեւ ամենասերտ կապ կա: Արտադրության մեջ ունեցած հաջողությունները հենված են գիտելիքների ամուր հիմքի վրա, գիտելիքներ, վոր ստախանովական ընկ. Ֆոմիշովն ստացել է դասընթացներում և տեխնիկումում սովորելու ժամանակ:

Պատի թերթերն իրենց ընթերցողներին պետք ե դաստիարակեն կոմոնիստական բարոյականության վորով, պայքարեն նոր, խորհրդային կենցաղի համար: Վ. Ի. Լենինը մատնանշել ե, վոր «կոմոնիմտական բարոյականության հիմքում դրված և պայքարը կոմոնիզմի ամրացման և ավարտման համար»: Ազնվորեն աշխատել յերկրի բարորության համար, ոգնել հետ մնացողներին, պահպանել սոցիալիստական համակեցության կանոնները, ազնվորեն, ճշմարտացի վերաբերվել մեր խորհրդային մարդկանց, ատել սոցիալիզմի թշնամիներին և անողոք պայքարել նրանց դեմ, — այդ հատկությունները հատուկ են նոր, խորհրդային մարդուն: Ծովությունը, խովհանությունը, յերեսպաշտությունը, վոլ-ընկերական վերաբերմունքը կնոջը, ուրիշ ազգության բաղդացիներին և նման հակահանրային վարմունքը կապիտալիզմի մնացուկ և հանդիսանում մարդկանց գիտակցության մեջ:

Կան դեռևս անգիտակից, հետամնաց մարդիկ, վորոնք արհամարանքով են վերաբերվում ամուսնությանը և ընտանիքին, խոսափում են հայրական պարտականություններից: Պատի թերթերը պետք ե պայքարեն կենցաղում այդ այլանդակ արտահայտությունների դեմ, ամենորյա դաստիարակչական աշխատանքով ովհեն աշխատավորներին՝ հաղթահարելու հին, բուժութական հասարակության մնացուկներն իրենց գիտակցության մեջ:

«Ստախանովեց» թերթը, վոր լուս և տեսնում Ժիտոմիրի մարզի Ոլեսկի շրջանի Վորոշիլովի անվան կոլխոզում, սիստե-

մատիկորեն լուսաբանում է կենցաղի հարցերը: Նա մտցրել է մշտական բաժին — «Գյուղական դատարանում»: Մի անգամ դատարանը քաղաքացի Ռ.-ին տուպանել եր 10 ուուրսվ այն բանի համար, վոր նա իր ազգկանը դպրոց չեր թողնում: Պատի թերթը հրապարակել եր ուասուցիչների և կոլխոզնիկների հոդվածները, վորոնք դատապարտում ելին Ռ.-ի վարմունքը և յերեխաների դաստիարակության հետ կապված միշարք հարցերը բարձրացնում: Այդ գործի շուրջն ստեղծված հասարակական կարծիքն ովհում է զգալիորեն բարեկավել դաստիարակչական և դպրոցական աշխատանքը:

«Պրիկորդոննիկ» պատի թերթի յուրաքանչյուր համարում (ուույն շրջանի Ոլեսկի պրոմարտում) կա բաժին ընտանիքի յեվ կենցաղի մասին: Այստեղ թղթակցություններ են զետեղվում, վորոնք տեղական փաստերով ու որինակներով ցուց են տալիս, թե ինչպես ե աճում աշխատավորների կուլտուրական մակարդակը:

Պատի թերթում նյութեր են հրապարակվում հակակրոնական աշխատանքի, առողջարանության, բնակարանի մաքրության մասին, ցուց և տրվում հարբեցողության վնասակարությունը յեվ այլն:

Պատի թերթը հարց է բարձրացրել կուլտուրական աշխատանքի ուժեղացման մասին: «Անհրաժեշտ ե նշել, — գրել ե նա, — վոր կոմիտեի համար կազմակերպությունը և արտելի վարչությունը չեն հետաքրքրվում աշխատավորների կենցաղով, ինչպես հարկն և չեն զբաղվում կուլտ-դաստիարակչական աշխատանքով»:

Թերթի նախաձեռնությամբ անց և կացվել բժշկի վրուցքն ալկոհոլի վնասակարության մասին, հակակրոնական դասախոսություն և կարդացվել: Արտելում կուլտ-լուսավորական աշխատանքն աշխատավորել եւ:

Կուլտուրական աշխատանքին զգալի ուշադրություն և հատկացնում 2-րդ վագոնային ուղեմասի (Ուսինոսստրովսկ, Մուկայի մարզ) «Զա զգորովիյ վագոն» ամենորյա պատի թերթը, 1940 թվականի սկզբին նա հանդիս է յեկել մի հոդվածով՝ յենթաշեֆ դպրոցում պիոներ կոմիլարի աշխատանքի մասին: Պատ-

մելով այն կոմյերիտականների մասին, վորոնք պիոներների հետ մեծ և հետաքրքիր աշխատանք են կատարում, պատի թերթը քննադատում ե այն կողվարներին, վորոնք անփույթ են վերաբերվում իրենց աշխատանքին, գլուցին չեն ոգնում պարարելու գերազանց առաջադիմության և ամուր կարգապահության համար:

Թերթը քննադատում ե այն ղեկավարներին, վորոնք չեն հետեւում, թե ինչ ե կատարվում բանվորների հանրակացարաններում: Իսկ այնտեղ դեպքեր են լինում, յերբ հարբեցողներն սկանդալներ, կոփվներ են սարքում: Կոմենդանտը և մասսովիկը վոլ մի միջոցի չեն դիմում հանրակացարանում կուտուրական աշխատանքը կարգավորելու համար:

«Զա զդորովից վագոն» պատի թերթը զերմությամբ նշեց գրադարանապետութի Յե. Պ. Ենթեսովայի տասնամյա աշխատանքը, վորո շատ բան և արել բանվորների մեջ տեխնիկական գիտելիքների պրոպագանդայի համար: Ընկ. Թերթետովան հեռախոսով և փոստով ընթերցողներին հաղորդում ե ստացված նոր գրքերի մասին, նոր ընթերցողներ ե ներգրավում:

Թերթին վորապես հավելված լուս ե տեսնում «Նե վ բրով, ա վ գլազ» թերթիկը: Այստեղ կծու կերպով ծաղրվում են հարբեցողները, պրոգրամմաները, թափթփվածները:

Մոսկվայի Սրվեստների գործերի կոմիտեյում լուս տեսնող «Բարունիկի իսկուսավ» պատի թերթի խմբկովեկիան նախաձեռնություն և դրսեվորել, բարձրացնելով կոմոնիստ-ծնողների կողմից յերեխաններին գաստիարակելու հարցը:

Պատի թերթի ակտիվիստները հաճախել են մի շարք գլուխոցներ, վորտեղ սովորում են կոմիտեյում աշխատողների յերեխանները: Նրանք գրուցել են մանկավարժների, դաստիարակին ղեկավարների և ծնողների հետ: Դրա հետեւանքով պատի թերթը շատ հետաքրքիր նյութ ե ստացել: Հոդվածներից մեկում պատմվում ե այն ծնողների մասին, վորոնք չեն զբաղվում իրենց յերեխանների դաստիարակությամբ, չեն ոգնում նրանց ուսմանը: Այդ պատճառով նրանց յերեխաններն անկարգապահ են, դասերից բացակայում են և հաճախ վատ գնահատականներ են ստանում:

Պատի թերթը հենց տեղնուտեղը պատմում ե այն ծնողների մասին, վորոնք մեծ ուշադրություն են դարձնում իրենց յերեխանների դաստիարակությանը, հետեւում են նրանց վարքին յել առաջադիմությանը դպրոցում:

Պատի թերթի այդ նյութը շատ արձագանքներ ե առաջ բերել և քննարկել ե կուսակցական ժողովում:

Աշխատավորների ֆիզիկական զարգացման հարցերը պետք ե պատի թերթերի եցերում զգալիորեն ավելի շատ տեղ զտնեն, քան մինչև այժմ: Մեր յերկրում հսկայական հեղինակություն են վայելում ֆուտբոլը, դահուկային մարզանքը, թեթեվ ատլետիկան, հրաձգային գործը: Սակայն խմբկովեկիանները յերեխն հարկ չեն համարում նույնիսկ մի քանի տող հատկացնել տեղի ունեցող մրցությանը, նկարագրել այդ մրցության հաղթողների նվաճումները:

Պատի մամուլը շատ բան կարող ե անել ֆիզկուլտուրային շարժման հետագա ընդլայնման համար: Խմբկովեկիանները պետք ե պատի թերթերում մասնակցելու գրավեն ֆիզկուլտուրայի հրահանգիչներին և սիրողֆիզկուլտուրներին, հաճախ հրապարակեն նրանց թղթակցությունները, հանդես գան վորապես գահուկային բազաների, սպորտհրապարակների կազմակերպման նախաձեռնողները, աջակցեն կոլեկտիվենորի և առանձին ֆիզկուլտուրնիկների միջեվ մրցության զարգացմանը: Այդ ամբողջ աշխատանքը պաշտպանական խոշորագույն նշանակություն ունի:

ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅՐԵՆԱՍԻԲՈՒԹՅՈՒՆ ԶԳԱՅՄՈՒՆՔՆԵՐ

Մեր հայրենիքը դաստիարակել է հիանալի հայրենասերների, վորոնք անձնվիրաբար պայքարում են սոցիալիզմի հետագա հաղթանակների համար; Հերոսները — սափառնորդները, տանկիստները, հրետանավարները, հեծյալները, հետևակները, վորոնք արիաբար կատարում են կուսակցության ու կառավարության հատուկ առաջադրությունները, ստախանովականները, վորոնք աշխատանքի բարձր արտադրողականություն, հարուստ բերք են ձեռք բերում, նոր հիանալի կառուցումների շինարարները — բոլոր նրանք իրենց գործերով փառաբանում են իրենց հայրենիքը, բազմապատճում են նրա հզորությունն ու հարստությունը:

Դեպի հայրենիքն աննախընթաց սիրո վառ արտահայտություն և հանդիսանում Մեծ Ֆերգանի ջրանցքի կառուցումը: Իրենց նախաձեռնությամբ ուզբեկ և տաշչիկ կոլխոզնիկները կառուցել են 270 կիլոմետր յերկարությամբ ջրանցք: Կառուցմանը մասնակցել են 160 հազար կոլխոզնիկ, վորոնք 45 որվա ընթացքում հանել են համարլա 18 միլիոն խորանարդ մետր ջող, Ամենակարև ժամկետում կատարված և այնպիսի աշխատանք, վորի կատարման համար, թվում եր, շատ տարիներ ելին հարկավոր:

Ընկեր Ստալինը սովորեցնում է մեզ «ծավալել և մշակել խորհրդային հայրենասիրությունը»: Սոցիալիզմի մեծ յերկրի լուրջաբանը քաղաքացի պետք է տիրապետի հերոսության, անձնազության, արիության: Պատի թերթերի, ինչպես և ամբողջ բոլշևիկան մամուկի խնդիրն և՝ աշխատավորների մեջ

դաստիարակել այդ հատկությունները, ամբացնել սերը դեպի իր մայր-հայրենիքը:

Միրո այդ զգացմունքները գեղի սոցիալիստական հայրենիքը, զեպի իր հարազատ բոլշևիկյան կուսակցությունը՝ միննույն ժամանակ անխպելիորեն կապված են պրոլետարական ինտերնացիոնալիզմի հետ, միջազգային պրոլետարիատի հանդեպ պատասխանատվության զգացմունքի հետ: Խորհրդային ժողովուրդը ցուցադրեց իր հավատարմությունն ինտերնացիոնալ խնդիրներին, ոգնության ձեռք մեկնելով Արևմտյան Ռվերիայի և Արևմտյան Բելոռուսիայի ժողովուրդներին, վորոնք տրնքում ելին լեհական պաների ճնշման տակ: Աշխատավորներին դաստիարակել խորհրդային հայրենասիրության վորով — այդ նշանակում և պատվաստել նրանց այնպիսի հատկություններ, վոր հատուկ են կոմոնիստական հասարակության քաղաքացիներին:

Խորհրդային հայրենասիրության, խորհրդային ժողովրդի մեծ սիրո արտահայտությունը զեպի իր հայրենիքը յերևում և և՛ պանծալի սավառնորդների հերոսական թոփշներում, վորոնք համաշխարհային ունկորդներ սահմանեցին, և՛ մեր փառապանծ Կարմիր Բանակի խոշորագույն շքերթներում, մարտական գործերում: Խորհրդային հայրենասիրությունն արտահայտվում է սոցիալիստական շինարարության բոլոր տեղայիսակրում: Փարբիկներում և գործարաններում, սովորզներում, կոլխոզներում, հիմնարկություններում և այլն: Պատի մամուկը պետք և աշխատավոր մասսաներին դաստիարակի խորհրդային մարդկանց հիանալի հերոսության կոնկրետ որինակների ու փաստերի վրա:

Պատի թերթերը պետք և առանձին ուշադրություն հատկացնեն մեր հայրենիքի պաշտպանումակության ամբացմանը: «Մեր ամբողջ ժողովրդին, — ասել ե ընկեր Ստալինը, — պետք և մորթիկացիոն պատրաստության զրության մեջ պահել սազմական հարձակման վտանգի հանդեպ, վորպեսզի վոլ մի պատահականություն» և մեր արտաքին թշնամիների վոլ մի ֆոկու շկարողանան մեզ հանկարծակի բերել»:

Շատ պատի թերթեր մեծ ուշադրություն են հատկացնում պաշտպանական աշխատանքին: Կրասնոդարի յերկրամասի

Տիմաշևսկի շրջանի Կադանովիչի անվան «Զատեմպի» պատի թերթի խմբկութեան կազմակերպել ե կոլխոզնիկների նամակագությունն իրենց հայրենակից-կարմիրքանակայինների հետ: Զերնիկովի մարզի Մոլոգեփշցիկ շրջանի Դիմիտրովի անվան կող խոզի «Շեղարնիկ» պատի թերթը հաջողեցրել ե ՊԱ.Զ.-Ավիաքիմի աշխատանքի բարելավումը: Դրա հետեւանքով կոլխոզը պատրաստել ե վորոշիլովյան 25 հրածիդ, ՊԱ.Պ.-ի 18 կրծքանշանակիր:

Պաշտպանական աշխատանքին մեծ ուշադրություն ե հատկացնում Լ. Մ. Կագանովիչի անվան «Շարիկովոդշինիկ» գործարանի մեր վերև հիշած «Ավտոմատշիկ» պատի թերթը: Այդ պատի թերթի խմբկութեան լուս ե ընծայում ՊԱ.Զ.-Ավիաքիմի ցեխային կազմակերպության աշխատանքին նվիրված հատուկ համարներ:

«Այդպիսի հայրենասերներ ունեցող յերկիրն անպարտելի յեւ հոգվածում «Ավտոմատշիկ»-ը գորում ե.

«Մեր ցեխի զորակոշիկները, Խորհրդային Միության զորակոշիկների հետ միասին, զորակոչի սկսվելուն են գալիս լավ նախապատրաստությամբ: Բոլոր զորակոշիկներն ունեն պաշտպանական կրծքանշաններ: Վորոշ ընկերներ ավարտել են սավառնորդների և պարագյուտիստների ուսուցումը: Զորակոշիկների մի մասն ամառային դարոցները կավարտի մինչև զորակոչի մոմենտը:

Սավառնորդների կոշում են ստացել կոմյերիտական-զորակոշիկներ ընկերներ Միշակովը, Զագորսկին, Խարիտոնովը և ուրիշները: Կոմյերիտական ընկերներ հվանելու և լուսակինը սովորել են ավտոմոբիլ զեկավարել:

Զորակոշային կետը ներկայանալու վերաբերյալ առաջին ծանուցագրերը զորակոշիկների մեջ շատ ուրախություն են առաջացնում: Յեխի Հասարակայնությունը մեծ զերմությամբ է նշում Կարմիր Բանակում ծառայելու նկատմամբ մեր յերիտասարդության ձգտումը:

Մինչև զորակոչը մնացած որերը զորակոշիկները նրանց են նոր նվաճումներով արտադրական աշխատանքի մեջ: Զորակոշիկների վոգեվորությունը ցուց է տալիս, վոր այս

տարի Կարմիր Բանակի շարքերը զորակոշվող յերիտասարդությունը գերազանց համալրում է հանդիսանում: Այդպիսի հայրենասերներ ունեցող յերկիրն անպարտելի յեւ:

Դժբախտաբար, շատ պատի թերթեր խորհրդային հայրենասիրության մասին, յերկիրի պաշտպանության մասին գրում են ընդհանուր, ճշգնան ֆրազներով: Այնինչ կյանքն այնքան վառ փաստեր ու որինակներ ե բերում, վարոնց մասին հաղորդելով, պատի թերթերը մեծ ոգուած կրերեն խորհրդային հայրենասիրություն և հայրենիկի նկատմամբ սեր դաստիարակելու գործին:

Ստալինգրադի տրակտորային գործարանի ավտոմատային ցեխի պատի թերթը հրապարակել եր «Յերեք յեղբայրի» հոգվածը:

«Մենք յերեք յեղբայր ենք, — գրում ե այդ հոգվածի հեղինակ Վ. Ակսենեվը: — Ավագ յեղբայր Մակսիմը տրակտորիստ և բարդ գյուղատնտեսական մեթենաների մեքենավար ե: Յես՝ ինժեներ-տեխնոլոգ, Ստեպանը՝ տրակտորիստ և կոմբայնավար: Մակամին ինտերվենտների ղեծ մզած մարտերում ունեցած մարտական ծառայությունների համար խորհրդային կառավարությունից ստացել ե բարձր պարզելու և կարմիր Դրոշի շքանշան: Ինձ բաժին ե ընկել շախազախել Հակահեղափոխության մնացորդներին, բանդիտներ վակովին, Պոպովին և բուժարական բասմաշիներին...

....Խորհրդային իշխանության որոք մենք դիմումներ ենք ստացել՝ յես ինստիտուտն ավարտելու մասին, յեղբայրներս՝ տրակտորիստների ու կոմբայնավարների դասընթացներն ավարտելու մասին: Այժմ մենք խորհրդային մասնագետներ ենք, ընկեր Ստալինի նախաձեռնությամբ ստեղծված ինտելիգենցիայի մի մասը: Մեր գիտելիքները մենք տալիս ենք սոցիալիստական շինարարությանը, խորհրդային ժողովրդին: Յեթե կառավարությունը պահանջիր, մենք նորից կշահցախենք թշնամուն, վորը կհարձակվի մեր հայրենիքի վրա:

Այդ նամակը—սոցիալիստական հայրենասիրության, առանց կյանքը խնայելու սեփական հայրենիքը կըքով պաշտ-

պանելու համար խորհրդային մարդկանց պատրաստակամության
վառ փաստաթուղթ է:

Հոկտեմբերի 12-րդ տարեդարձի անվան կոլխոզի (Դնեպրո-
պետրովսկի մարզի Ստալինգրոֆի շրջան) «Ստախանովեց»
թերթը գնտենել և կարմիրբանակայինի մոր Հիանալի, խորհր-
դային հայրենասիրության շերժ զգացմունքով լի նամակը՝ «Իմ
վորդին» վերնագրով:

«Իմ վորդիներին ուղարկելով Բանվորա-Գյուղացիական
կարմիր Բանակի շարքերը, —ասվում և նամակում, —յս կը-
տակել եմ նրանց մինչև վերջը սիրել իրենց ժողովրդին,
պահպանել մեր յերջանիկ կյանքը:

Յերբ Խասան լճի մոտ մինչև ատամները զինված թշշ-
նամիները փորձեցին խախտել մեր սրբազն սահմանը, իմ
վորդի Արխիան իր ընկերներով առաջինը կովի գնացին
թշնամու դեմ: «Հանուն Ստալինի», «Հանուն Ստալինյան
Սահմանադրության» խոսքերը շուրջերին՝ իմ վորդին մինչև
իր վերջին ոսթերը կովեց յերջանիկ, ուրախալի և զվարի
կյանքի համար:

Մարտական ծառայությունների համար կառավարությու-
նըն իմ վորդուն պարզեատրել և Կարմիր Դրոշի շքանշանով:
Պանծալի բժշկությունը բուժել եմ վորդուն, և նա նորից
գնացել և պաշտպանելու մեր հայրենիքի հեռավոր սրբա-
զան, անխախտելի սահմանները:

Վերջերս իմ յերկու վորդին ևս կամավոր են գնացել
Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի շարքերը: Նը-
րանք նույնպես կպաշտպանեն սահմանը և մեր յերջանիկ
կյանքը»:

Գորկու մարզի Կույրիշենի անվան կոլխոզի ամենորյա թեր-
թը հրապարակել և Կարմիր Բանակի շարքերում գտնվող իր կոլ-
խոզնիկ Վ. Պ. Գոլովկինի նամակը: Նա գրում են, վոր սոցիալիզմի
բանակի մարտիկի պատվավոր կողումն արդարացնում և մար-
տական և քաղաքական գերազանց պատրաստությամբ:

Ընկ. Գոլովկինը կոլխոզնիկներին կոչ և արել՝ կոլխոզում
աշխատել աղնվաբար, պայքարել Արզամասի շրջանում ամենա-
բարձր բերքի համար:

Ամենորյա «Բակլյա» պատի թերթը, վոր լույս և տեսնում

Տրյոխգորնայա ֆաբրիկայի (Մոսկվա) տպագրական և ներկ
յեփող ցեխում, 1940 թվականի հունվարին հրապարակել ե
բանվոր ընկ. Զասիմովի հիանալի պատմությունը: Նա կոչվում է
«Հոր ուրախությունը և հպարտությունը»:

Ընկ. Զասիմովի վորդուն, Բորիսին, 1938 թվականի սեպ-
տեմբերին զորակոչել են Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բա-
նակ:

«Իմ վորդին ուրախությամբ գնաց ԲԳԿԲ շարքերը, —
պատմում են ընկ. Զասիմովը: —Փոքր հասակից դաստիա-
րակված պիոներական կազմակերպությունում, այնուհետեւ
կոմսոմոլում, մոլեռանդ ֆիզկուլտուրնիկ, կրծքանշանակիր,
նա վատ չեր պատրաստված ԲԳԿԲ շարքերի համար:
Վորդուն ճամբար գցելով, ընկ. Զասիմովը հայրական նակազ
տվեց նրան:»

«Տես, Բորիս, աղնվորեն կատարիր խորհրդային քա-
ղաքացու սրբազն պարտականությունը —արթուն պահպա-
նիր մեր սահմանները, յեղիր կարգապահ, տիրապետիր
ուզմական տեխնիկային և գալիք մարտերում, կյանքո-
շնայելով, պաշտպանիր հայրենիքը»:

Բորիսը դարձավ կրտսեր հրամանատար: Նա գտնվում եր
հերոսական Կարմիր Բանակի այն զրամասերում, վարութ լիկվի-
դացիայի յենթարկեցին ԽՍՀՄ դեմ պատերազմի ամենավտան-
գավոր ուզմաբեմը, ապահովեցին մեր հյուսիս - արևմտյան
սահմանների անվտանգությունը, լենինգրադի, Մուրմանսկի և
Մուրմանսկի յերկաթուղու անվտանգությունը, և մասնակցել ե
յերեք մարտի: Վերջին մարտի նախորյակին Բորիսը նամակ ե
գրել ծնողներին: Այստեղ ասլում ե.

«Այսոր ժողովրդի թշնամիների դեմ յերկորդ մարտն եմ
մտնում: Ենս խնդրում եմ, վորես պատահմունքի գեպում,
ինձ հիշել, վորպես բոլշևիկի, վորպես հայրենիքի հավա-
տարիմ զավակի...»:

Այսուհետեւ գալիս ե յերկորդ նամակը.

«Դեկտեմբերի 9-ին... յես վիրավորվեցի սպիտակ-
ֆինների դեմ մղված մարտում... Դանվում եմ. Ն... Հիվան-
դանոցում, բժշկում են լավ: Յուրաքանչյուր մահաձկալի
մոտ ուղիւ կա, հաճախ դիտում ենք կինո, լսում պատե-

Ֆոն: Մեզ Հաճախում են հրամանատարները յեկ հրամակագմի կանայք, մեզ համար բերելով այն ամենը, ինչ միայն ուզում ենք, ուստի խնդրում եմ շանհանգստանալ: Վուշնչ Հարկավոր չե ինձ ուղարկել, բացի նամակներից: Վողջուն Հաղորդեցեք իմ Հարազատներին և ծանոթներին: Ասացեք նրանց, վոր Բանվորա - Գյուղացիական Կարմիր Բանակի մարտիկները կվաշնչացնեն պատերազմի հրծիգներին: Ընկ. Զասիմովը պարծենում է իր վորդիներով: Նրանք յերեք հոգի յեն, և բոլորն ել թգկբ շարքերում: Ավագ վորդին՝ Վասիլին - Խաղաղովիկիանոսյան նավատորմի լեյտենանու և: Ֆերկորդ վորդին՝ Դմիտրին 18 տարեկան, կամավոր և գնացել Կարմիր Բանակը: Նրան ընդունել են թոփքային զորամաս: Այժմ նա լեյտենանու է:

Ընկ. Զասիմովը պատասխան է ուղարկել Բորիսին: Այնտեղ նա գրում է.

«Վորդիս, դու մարտի ժամանակ վերք ես ստացել: Յես պարծենում եմ, վոր դու պատվով ես կատարել պարտքը Հայրենիքի Հանդեպ և կյանքի շննայելով, կովել ես մարտում: Դու արդարացրել ես մեծ նորհրդային յերկրի կարմիր ուսպմիկի կոչումը... Հարկավոր մոմենտին, յեթե պահանջվի, ապա յես ևս, ծերումիս, հրացանը ձեռքս կառնեմ, վորպեսզի վորդիներիս հետ միասին ձեռք-ձեռքի տրված պաշտպանեմ մեր սիրելի ծաղկող Հայրենիքը»:

Ընկ. Զասիմովի պատմածը խորհրդային մարդկանց մեծ Հայրենասիրության վառ և հուզող ցուցադրումն է, մարդիկ, վորոնք անսահման սիրում են իրենց սոցիալիստական Հայրենիքը: Պատմածը գրված է պարզ, ներթափանց լեզվով, կարդացվում է Հափշտակությամբ:

Հրապարակելով նմանորինակ նյութեր, պատի թերթերն ուղարկել են աշխատավորների մեջ սոցիալիստական Հայրենասիրության զգացմունքների ամրացմանն ու զարգացմանը:

Ճիշտ և վարվել «Մայակ կուլտուրի» կոլխոզի (Կրասնոյարսկի յերկրամաս) «Նովայա ժիգն» պատի թերթը, հատուկ համար նվիրելով կոլխոզում տարվող պաշտպանական աշխատանքներին: Սովորաբար, պաշտպանական աշխատանքի մասին թղթակցություններ գետեղելով, շատ թերթեր սահմանափակվում են

Հաղորդումներով, թե խմբակներում վորքան հրաձիգներ յեկ կրօքանշանակիրներ են պատրաստված, քանի պարապմունք ե անցկացված և այլն: «Նովայա ժիգն» պատի թերթն այլ կերպ է վարվել: Նա հետաքրքիր հողված և զետեղել Վորոշիլովյան հեծալների խմբակի աշխատանքի մասին: Այդ խմբակը կազմակերպվել է պատի թերթի խմբկութիւնի նախաձեռնությամբ: Դեռևս 1939 թվականի ոգոստոսին թերթն առաջարկություն է մտցրել - կոլխոզում պատրաստել կարմիր հեծյաներ, Վորոշիլովյան հեծյաներ, վորոնք պատրաստ լինեն ամեն մի բուկ փոթորկի նման Հարձակվել թշնամու վրա: Կոլխոզնիկները ջերմորեն պաշտպանեցին թերթի առաջարկությունը յեկ պարտավոնքների համար ձիեր տրամադրեցին:

Անցյալ տարի տեղի ունեցան քննություններ: 8 կոլխոզնիկ պատվով քննություն բռնեցին և ստացան «Վորոշիլովյան հեծյալ» կրծքանշաններ:

Այդ նույն համարում զետեղված են կոլխոզնիկների նամակները: Ընկ. Մարշենկոն գրում է, վոր նա ավարտել ե արրակտորիստաների դասընթացները և այժմ աշխատում է տրակտորի վրա: Նա զրակոշիկ ե և պարտավորվում է Հանձնել պաշտպանական կրծքանշանների նորմաները, սովորել վորոշիլությար կրակել: Կուսակցության և կառավարության առաջին կոչով ընկ. Մարշենկոն պատրաստ է «տրակտորից նստել տանկի վրա՝ պատվով պաշտպանելու համար այն գործը, վորի համար պայքարել են մեր Հայրենը ու յեղբայրները»:

Հենց այստեղ հրապարակված է կոլխոզնիկուհի Անաստասիսակը. Նովիկովյանի նամակը.

«Ձես մտել եմ Ստալինյան Յերրորդ Հնդամյակի անգան մրցության մեջ, գրում ե նա, —և պարտավորվել եմ կատարել ու գերակատարել մշակման նորմաները: Վեցրած պարտավորությունները պատվով կկատարեմ... Այժմ յես ուսումնասիրում եմ տրակտորը: Այդ անհրաժեշտ ե այն պատճառով, վոր մենք գտնվում ենք կապիտալիստական շրջապատման մեջ: Յես հավաստիացնում եմ, վոր ամեն մի բոպե յես աշխատանքում կփոխարինեմ տղամարդում և կաշխատեմ տրակտորի վրա, իսկ յեթե հարկ լինի, ապա տանկ կնստեմ»:

Թերթերը պետք ե ավելի շատ նախաձեռնություն, հետաքրքիր հնարք դրսեվորեն։ Ահա, որինակ, Կուրսկ կայարանի հյուսիսային դեպոյի «Պյատնացատիւր—սաշնիկ» թերթի խրմակողեգիան քաջարի կարմիր գնդերի կողմից Կուրսկ քաղաքը սպիտակ գվարդիական բանդաներից ազատելու 20-ամյակի կապակցությամբ լույս ե ընծայել թերթի հատուկ համար։ Նա հրապարակել ե քաղաքացիական պատերազմի ժամանակ Կուրսկի համար մղված մարտերի մասնակիցների հիշողությունները, հետաքրքիր պատմական փաստաթղթեր։

Այդ նույն համարում խմբողեգիան թղթակցություններ ե գետեղել ստախանովական-յերկաթուղայինների հաջողությունների մասին, միջլացման մեծ անցումների համար, վառելիքի տնտեսման համար, առանց ավարիայի աշխատելու համար նրանց մղած պայքարի մասին։ Հենց այստեղ ել հաղորդվում է շոգեւարժախնների մրցության արդյունքների մասին։ Այսպես, անցած որերի պանծալի գործերը ձայնակցում են մեր որերի աշխատանքային արիության փաստերին։

Պաշտպանական թեմաներին վերաբերող թղթակցություններն ու հոդվածները պետք ե կանոնավոր գետեղվեն յուրաքանչյուր պատի թերթում։ Լավ կլինի մացնել «Ամրացրու ԽՍՀՄ պաշտպանությունը» բաժին։ Ոգտակար ե կազմել պաշտպանական հարցերը թերթում լուաբաններու պլան ու այն ճննարկել Պաշրազիամի, Կարմիր խաչի ընկերության և պաշտպանական մյուս ընկերությունների ակտիվիտաների հետ միասին։

Ցուրաքանչյուր բոլցեվիկի — կուսակցական վոչ - կուսակցական - անպայման հատկությունը բոլցեվիկյան զգոնությունն եւ Պատի թերթերի խնդիրն ե նպաստել աշխատավորների քաղաքական զգոնության բարձրացմանը, մոբիլիզացիա;ի յենթարկել նրանց՝ հապիտալիստական յերկրների տրոցկիստական-բուխտ-բինական ստոր գործակալության վնասարարության հետեվանքներն արագությամբ վերացնելու համար։ Պետք ե ամեն ժամանակ նկատի ունենալ, վոր «...քանի գոյություն ունի արտաքին կապիտալիստական շրջապատումը, ուսարերկրյա պետություն-

ների հետախուզությունները մեզ մոտ կուղարկեն վնասարարների, գիվերսանտների, լրտեսների ու մարդասպանների, վորպեսի փշացնեն, վնաս հասցնեն, թուզացնեն մեր յերկիրը, վորպեսպի խանգարեն կոմունիզմի աճին ԽՍՀՄ-ում»։ (ՀամԿ(բ)կ XVIII համագումարի բանաձեւից՝ ընկ. Մոլոտովի զեկուցման առթիվ):

Պատի թերթերի խմբկողեգիաները և բանգյուղթղթակիցները գրանից պետք ե գործնական յեզրակացություններ հանեն։ Նրանք պետք ե կոնկրետ որինակներով աշխատավորների մեջ դաստիարակեն բոլցեվիկյան զգոնության զգացմունք։

ՊՐՈՊԱԳԱՆԴԱ ԱՆԵԼ ՍՏԱԼԻՆՑԱՆ ՍՈՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ

Մեծ Ստալինյան Սահմանադրությունը սոցիալիզմի հաղթանակների հանրագումարն և տվել, ամրապնդել և համաշխարհային-պատմական այն փաստը, վոր Խորհրդային Միությունը մտել և զարգացման նոր շրջանը, սոցիալիստական հասարակության կառուցումն ավարտելու և աստիճանաբար կոմունիզմին անցնելու շրջանը:

Ստալինյան Սահմանադրությունը խորհրդային ժողովրդի գորշն և դարձել: Նա բանվոր դասակարգին, գյուղացիությանը, խորհրդային ինտելիգենցիային զինում և պայքարելու կոմունիզմի նոր հաղթանակների համար:

Ստալինյան Սահմանադրությունը ԽՍՀՄ քաղաքացիներին մեծագույն իրավումներ և տրամադրում, վորոնք տեսնված չեն վաշ մի կապիտալիստական յերկրում, —աշխատանքի, կրթության, հանգստի, ծերության ժամանակ ապահովման իրավունք, ժողովրդի, մամուլի ազատույթուն և այլն:

Սահմանադրության յուրաքանչյուր հոդվածը խոսում և լենինի - Ստալինի կուսակցության զեկավարությամբ ձեռք բերած մեր հաղթանակների վեհության մասին:

Յուրաքանչյուր պատի թերթի խնդիրն և լայնորեն պրոպագանդա անել Ստալինյան Սահմանադրության գաղափարները, աշխատավորներին դաստիարակել մեծ Խորհրդային Միության քաղաքացու պարտականություններն ազնվորեն և անշեղորեն կատարելու վորով:

Սակայն վորոշ պատի թերթեր այդ կարեվորագույն հարցի ըստաբանությամբ սահմանափակվում են միայն «առողջություն» - Ստալինյան Սահմանադրության որվան, ընտրական կամպանիաներին նվիրված հատուկ համարներում և այլն:

Պատի թերթերի վիխավոր խնդիրն և Ստալինյան Սահմանադրությունը ցուց տալ գործողության մեջ, կյանքում:

Վերցնենք, որինակ, Սահմանադրության 118-րդ հոդվածը ԽՍՀՄ քաղաքացիների աշխատանքի իրավունքի մասին: Վորքան հրաշալի թեմաներ կան այստեղ պատի թերթերի համար: Հին բանվորների, կոլխոզների, ինտելիգենցների հիշողություններն անցյալ ժամանակի մասին, յերբ աշխատավորների գիխավերներ մշտակես կախված եր գործադրկոթյան սպառնալիքը: Պատմություններ անցյալում հարկադրական աշխատանքի յեզ ներկայում ազատ, ուրախ աշխատանքի մասին իր համար, իր սեփական պետության համար:

Ինկ Սահմանադրության հոդվածները հանգստի, ծերության ժամանակ ապահովության, կրթության իրավունքի մասին, կանաց իրավահավասարության, ազգությունների իրավահավասարության մասին, —միթե Ստալինյան Սահմանադրության այդ հոդվածները թեմաների առատաբուխ աղբյուր չեն պատի մամուլի համար, տեղական կյանքից վերցրած կենդանի, հաջող փաստերի վրա հիմնված թղթակցությունների ու հոդվածների համար:

Հարկավոր և պատի թերթերում լայնորեն պրոպագանդա անել Սահմանադրության այն հոդվածները, վոր խոսում են ԽՍՀՄ քաղաքացիների իրավունքների մասին.

— Պահպանել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Սահմանադրությունը, կատարել որենքները, պահպանել աշխատանքի կարգապահությունը, ազնվորեն վերաբերվել հանրային աշխատանքին, հարգել սոցիալիստական համակեցության կանոնները:

— Պահպանել և ամրացնել հանրային, սոցիալիստական սեփականությունը, վորպես խորհրդային կարգերի սրբազն ու անձեռնմխելի հիմքը, վորպես հայրենիքի հարստության և հզորության աղբյուրը, վորպես բոլոր աշխատավորների ունեվոր և կուլտուրական կյանքի աղբյուրը:

Կատարել պատվավոր պարտականությունը — զինվորական ժառայությունը Բանվորա-Դյուղացիական Կարմիր Բանակի շարքերում, պատվով կրել մեծ սոցիալիստական պետության զինվորի կոչումը:

Կոնկրետ որինակներով և փաստերով Ստալինյան Սահմանադրությունը պետք է ցուց տալ գործողության մեջ: Նրա մեջ գրված որենքները — Խորհրդացին Միության՝ կոմունիստական հասարակություն կառուցող միլիոնավոր քաղաքացիների հենց կյանքն է: Պատի թերթերի, բանվուղթիթմակիցների խնդիրն եւ վոչ թե ընդհանուր վերացական գատողություններով, այլ իրենց շրջանի, գյուղի կյանքից վերցրած որինակներով ցուց տալ Ստալինյան Սահմանադրության վեհությունը, ամբողջ բազմազնությամբ ցուց տալ քաղաքի և գյուղի աշխատավորների պայծառ կյանքը:

Այդպես ե անում Գորկու մարզի Արգամասի շրջանի Կույբիշեվի անվան կոլլուգի «Պոստալինսկոմու պոստի» պատի թերթը: Այդ պատի թերթի համարներից մեկում այլոց շարքում գետեղված ե յերեք վոչ մեծ թղթակցություն: Դրանցից մեկում, վոր կոշվում ե «Շնորհակալություն կոսակցությանը և կառավարությանը», մի կոլլուգնիկունի պատմում ե այն հսկայական հոգատարության մասին, վոր կանաց նկատմամբ ցուցադրում են խորհրդացին իշխանությունը և բոլշևիկյան կոսակցությունը: Նրա ընտանիքը բաղկացած ե յոթ հոգուց: Բազմերեխության համար նա ստացել է չորս հազար ոուրլի պետական նպաստ:

Յերկրորդ թղթակցությունը Հաղորդում է, վոր կոլլուգում 50 հոգի սեփական հեծանիվներ ունեն: Յոթ կոլլուգնիկ վերջին տարիների ընթացքում պատեփոններ են ձեռք բերել: Կոլլուգնիկների տներում կա 400 յերկաթե նոր մահճակալ:

Յերրորդ թղթակցությունը հաղորդում է «մակսիմի վերադարձը» հնչուն գեղարվեստական ֆիլմի դիտման մասին: Դիտմանը ներկա յե յեղել մոտ 300 մարդ:

Պատի թերթերը պետք է ոգնեն աշխատավորներին՝ իմաստավորել անցած ուղին, պրոպագանդա անել մեր յերկրի ղեպի կոմոնիդմը հետագա առաջարժման հետանկարները, ստալինյան յերրորդ հնգամյակում նշված վիթխարի շինարարության

հեռանկարները: Անցյալի մասին պատմածը, յերբ բանվորներն ու գյուղացիները կարիքով ու վշտով լի ծանր կյանք ենին քարշ տալիս, և անցյալը զվարի ներկայի հետ համեմատելը վառ, համոզիչ նյութ ե, վոր աշխատավորներին նոր ոստեր, նոր յեռանդ ե տալիս կոմոնիդմի կառուցման համար:

Մուկվալի մարզի Բրոննիցկի շրջանի նիկովինո գյուղի «Զա վրսոկի ուրաժայ» պատի թերթի համարներից մեկում հրապարակված ե ուսուցիչ Դ. Գորոխովի նամակը: Կրերենք այն լի-ովին:

«Ծանր և անուրախ ե յեղել նիկովինոյի գյուղացիների կյանքը մինչև հեղափոխություն: Կուլակը, Յ խանության, ուրյադնիկը և տերտերը ծծում ելին շքավորների արյունը: Առավոտյան ժամը 3-4-ից բնակիչները զարթնում ելին յեկ սկսում մանվածք անել, գնում ելին հարուստ բուկանովի մոտ աշխատելու Խոկ տոներին տղամարդիկ և յերիտասարդները մի շաբաթվա վաստակած գոռշները խմելու ելին տալիս պանդոկներում: Յեկ այսպես ել մարդիկ ապրում ելին կարիքի մեջ, առանց բժշկական ոգնության, շոնենալով քաղաքական վոչ մի իրավունք: Վրա հասավ Հոկտեմբերը: Կյանքն ընթացավ այլ կերպ: Նիկովինոյում — կոլխոզ: Կոլխոզն ունի շրջանում խոշորագույն կաթնաապանքացին և խոզաբուծական ֆերմաները: Կոլխոզի դաշտերում աշխատում են տրակտորներ, կոմբայններ, ուրիշ բարոյ մեքենաներ: Նիկովինոյում կա վոշ-լրիկ միջնակարգ դրարոց, վորտեղ սովորում են 440 աշակերտ, կա ակումբ, Հընուն կինո, ծննդաբերական տուն, բուժարան, գրադարան, չոն կինո, ծննդաբերական տուն, բուժարան, գրադարան, վորն ունի 4000 գիրք: Նիկովինոյում գիրք շատ կա, Կա վորն ունի 1500 գիրք, կուակաբինետում 200: Նիկովինական դպրոցում 1500 գիրք, կուակաբինետում 400 թերթ յեկ լինոյում 250 տնտեսություն ստանում են թերթ յեկ լինոյում կա 170 ուղիուկետ, սարքավորված ե ելեկտրակայան:

Կա ֆիզկուլտկազմակերպություն, լարավոր յերածշտախումբ, մանկական յերգեցիկ խումբ յեկ հասակավորների յերգեցիկ խումբ, վորն աշխատում ե 5-րդ տարին և չորս յերգեցիկ խումբ, վորն աշխատում ե 5-րդ տարին և չորս անգամ մասնակցել ե մարզացին ոլիմպիադաներին: Կան անգամ մասնակցել ե մարզացին ոլիմպիադաներին: Կան անգամ մասնակցել ե մարզացին ոլիմպիադաներին: ՊԱ.Ձ.Ավիաքիմի կազմակեր-

պրովիան պրոպագանդը հակալական նշանակություն ունի աշխատավորների կոմոնիստական դաստիարակության գործում:

Մեր կադրերի գաղափարական զինումն ամենավճռողական հարցերից մեկն ե՝ կոմոնիստական հասարակության կառուցման խնդիրն իրականացնելու գործում: Ընկեր Ստալինը կուսակցության XVIII համագումարում ասել ե. «...յեթե մենք կարողանայնք աշխատանքի բոլոր ջուղերի մեր կադրերին իդեոլոգիապես նախապատրաստել և նրանց քաղաքականապես կոփել այն չափով, վորպեսզի նրանք կարողանայն ազատ կողմորոշվել ներքին և միջազգային իրադրության մեջ, յեթե մենք կարողանայնք նրանց դարձնել լիովին հասուն մարքսիստ-լենինյաններ, վորոնք ընդունակ լինեն առանց լուրջ սխալների լուծել յերկրի ղեկավարման հարցերը, — ապա մենք բոլոր հիմքերը կունենայնք մեր բոլոր հարցերի ինը տասերորդն արդեն լուծված համարել: Իսկ այդ խնդիրը մենք անպայման կարեղ ենք լուծել, վորովհետև մեզ մոտ բոլոր միջոցներն ու հնարավորությունները կան, վորոնք անհրաժեշտ են դրա լուծման համար»:

Մարքսիստական - լենինյան թեորիայի, մեր կուսակցության պատմության ուսումնասիրությունը մեր կադրերին կհարստացնի սոցիալիզմի համար բանվորների ու գյուղացիների պայքարի փորձով, կզինի հասարակական զարգացման որենքների իմացումով, հեղափոխության շարժիչ ուժերի իմացումով: Մարքսիստական - լենինյան թեորիայի, բոլշևիկյան կուսակցության պատմության ուսումնասիրությունն ե'լ ավելի կամրացնի հավատը լենինի-Ստալինի կուսակցության մեծ գործի վերջնական հաղթանակի նկատմամբ, ամբողջ աշխարհում կոմոնիզմի հաղթանակ:

Միանգամայն պարզ ե, վոր պատի մամուլը չի կարող յեկալիստք և թեորետիկական հոգվածներ հրապարակի: Նրա խնդիրն ե՝ ոգնել կուսակցական կազմակերպությանը՝ պրոպագանդիստական աշխատանքը բոլշևիկորեն դնելու համար:

Հրապարակելով Համկ(թ)ն պատմությունը հաջողությամբ ուսումնասիրող ընկերների նամակները, պատի թերթը հենց դրանով կոզմի մյուսներին, վորոնք մարքսիզմի-լենինիզմի աշ-

խատությունների վրա դեռևս ինքնուրույն աշխատանքի չեն ձեռնարկել, հաղթաշարել թերաժավատությունն իրենց ուժերի նը-կատմամբ և ձեռնարկել սիստեմատիկ աշխատանքի:

Հաղորդումները հերթական դասախոսության, կուսկարինետի միջոցառումների, կայացած կոնսուլտացիայի, գրադարանում ստացված նոր գրքերի մասին — այդ ամենն ընթերցողների մեջ ևն ցանկություն կառաջացնի լուրջ աշխատանքի ձեռնարկել բոլշևիզմին տիրապետելու համար:

Մեր բոլշևիկյան կուսակցության Կանոնադրությունը Համկ(թ)կ յուրաքանչյուր անդամին պարտավորեցնում և անդադրում աշխատել իր գիտակցականության բարձրացման վրա, մարքսիզմի-լենինիզմի հիմունքների յուրացման վրա: Պատի թերթերը պետք ե հիշեցնեն կանոնադրության ցուցումները վատ կատարող ընկերներին, վոր անհրաժեշտ և ընդայնել իրենց գաղափարական մտահորիզոնը՝ բոլշևիկյան կուսակցության անդամի պատվավոր կոչումը պատվով կրելու համար:

Բոլշևիկորեն ծավալելով այդ աշխատանքը, պատի թերթերը մեծ ոգնություն կհասցնեն կուսակցական կազմակերպություններին:

Մեծ և պատվավոր են պատի թերթերի ու բանգյուղթղթակիցների առջել կանգնած խնդիրները: Հանդիսանալով լայն մասսաների ինքնագործունեյության արդյունքը, պատի մամուլը պետք ե պատվով արդարացնի սոցիալիստական շինարարության աշխատավոր մասսաների կոմոնիստական դաստիարակության հզոր գործիքի իր դերը, կուսակցական կազմակերպությունների ակտիվ ոգնականի դերը:

Այդ պատճառով ստորին մարդունակության յեղ գաղափարական մակարդակի բարձրացումը, բանգյուղթղթակիցների բազմամիլիոն բանակին բոլշևիկյան վոգով դաստիարակելը կուսակցական կազմակերպությունների կարելորագույն իրնդիրն և հանդիսանում:

ԿՈՆՏՐՈԼԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ խոշոր փոփոխություններ են տեղի ունեցել մեր յերկրում ստալինյան յերկու հնգամյակների հաղթանակների շընորհիվ:

2. Խորհրդային Միությունը զարգացման վո՞ր շրջանն է թե վակուում:

3. Կուսակցության XVIII համագումարում ընկեր Ստալին ինչպիսի խնդիրներ է զբար մեր առջեղջ ներքին քաղաքականության բնագավառում:

4. Ինչո՞ւ այժմ գվասավոր, վճռողական խնդիր և հանդիսանում աշխատավորների կոմունիստական դաստիարակությունը:

5. Ինչպե՞ս և ձեր պատի թերթը լուսաբանում ստախանովյան շարժման հարցերը և փոխանցում սովորողների փորձը:

6. Ինչպե՞ս և ձեր պատի թերթը պայքարում հանրային սոցիալիստական սեփականության պահպանման և ամրացման համար:

7. Ինչպիսի ձևերով են արտահայտվում կապիտալիզմի մնացուկները մարդկանց գիտակցության մեջ և ինչպե՞ս և ձեր պատի թերթը նպաստում դրանց հաղթահարմանը:

8. Ինչպիսի դեր ունի հակակրննական պրոպագանդան աշխատավորների գիտակցության մեջ կապիտալիզմի մնացուկները վերացնելու գործում:

9. Ինչպե՞ս և ձեր պատի թերթի խմբկության ոգնում ակտիվին՝ կուլտ-քաղաքական աշխատանքը կազմակերպելու համար և ինչպե՞ս են կուլտուրայի ու կենցաղի հարցերը լուսաբանում պատի թերթում:

10. Ինչպե՞ս և ձեր պատի թերթը պրոպագանդա անում Ստալինյան Սահմանադրությունը:

11. Ինչպե՞ս և ձեր պատի թերթի իր ընթերցողներին դաստիարակում խորհրդային հայրենասիրության և պրոլետարական ինտերնացիոնալիզմի վոզով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԾՈՅ ՅԱՆԿ

ԱՇԽԱՏՈՎԱՐՆԵՐԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՍՏԻՄՐԱԿՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԻ ԱՌԹԻՎ:

Վ. Ի. Լենին.—Ճառ ժողովրդական կրթության նահանգային գավառային բաժինների քաղլուսվարների համամիութենական խորհրդակցությանը 1920 թ. նոյեմբերի 3-ին, Յերկեր, հ. XXV, եջ 448-456:

Վ. Ի. Լենին.—Ցեղատարարության միությունների խնդիրը, ճառ ԲԿՅԵՄ Համամիութենական III համագումարում 1920 թ. հոկտեմբերի 3-ին, Յերկեր, հ. XXX, եջ 403-417:

Վ. Ի. Լենին.—Ինչպես կազմակերպել մրցությունը, Յերկեր, հ. XXII, եջ 158-167:

Վ. Ի. Լենին.—Մեծ նախաձեռնություն: Թիկունքում բանվորների հերոսության մասին: «Կոմունիստական շաբաթորյակների» առթիվ, Յերկեր, հ. XXIV, եջ 325-349:

Վ. Ի. Լենին.—Մոսկվա-Կազան յերկաթուղում յիղած առաջին շաբաթորյակից դեպի համառուսաստանյան շաբաթորյակ-մայովկան, Յերկեր, հ. XXV, եջ 255-256:

Վ. Ի. Լենին.—Սոցիալիզմը և կրոնը, Յերկեր, հ. VIII, եջ 419-423:

Է. Վ. ՍԱՍԼԻԿԻՆ. — Ճառ ՀԿՅԵՄ Համամիութենական ուժինորդ համագումարում 1928 թ. մայիսի 16-ին, «Մոլոդայա Գըշարդիա» հրատարակություն, 1939 թ., եջ 14:

Ի. Վ. ՍՏԱԼԻՆ.—ԽՍՀ Միության Սահմանադրության նախագծի մասին; Զեկուցում Խորհրդական կրթության VIII Համամիութենական Արտակարգ Համագումարում 1936 թ. նոյեմբերի 25-ին, «Էնինիզմի հարցերը», 11-րդ հրատարակություն, եջ 507-534:

Ի. Վ. ՍՏԱԼԻՆ.—Ճառ Ստախանովականների առաջին Համամիութենական խորհրդակցությանը 1935 թ. նոյեմբերի 13-ին, «Էնինիզմի հարցերը», 11-րդ հրատ., եջ 493-506:

Ի. Վ. ՍՏԱԼԻՆ.—Հաշվետու զեկուցում կուսակցության XVIII Համագումարում ՀամԿ(բ)կ Կենտկոմի աշխատանքի մասին 1939 թ. մարտի 10-ին, «Էնինիզմի հարցերը», 11-րդ հրատ., եջ 564-611:

Վ. Մ. ՄՈԼՈՏՈՎ.—ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման յերրորդ հնգամյա պլանը; Զեկուցում և յեղրափակիչ խոսք ՀամԿ(բ)կ XVIII Համագումարում 1939 թ. մարտի 14-17-ին, «Պետքաղջրատ», 1939 թ., եջ 64:

Վ. Մ. ՄՈԼՈՏՈՎ.—Հոկտեմբերյան հեղափոխության XXII տարեդարձը; Զեկուցում Մոսկվայի Խորհրդի հանդիսավոր նիստում 1939 թ. նոյեմբերի 6-ին, «Պետքաղջրատ», 1939 թ., եջ 20:

ՀԱՄԿ(Բ)Կ XVIII ՀԱՄԱԳՈՒԹՅԱՐԻ ԲԱՆԱԳԵՎԵՐԸ 1939 թ. մարտի 10-21-ին, «Պետքաղջրատ», 1939 թ., եջ 72:

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՍՈԽԻՍՏԱԿԱՆ (ԲՈԼՇԵՎԻԿԻՆԵՐԻ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ: ՀԱՄԱՌՈՒՏ ԴԱՍԲՆԹԱՅՑ: ՀամԿ(բ)կ Կենտկոմի հանձնաժողովի խմբագրությամբ: Հավանություն և գտել ՀամԿ(բ)կ Կենտկոմի կողմից 1938 թ., «Պետքաղջրատ», 1938 թ., եջ 320-336, գլուխ XII (2, 3 և 4 բաժիններ):

ՅԵՄ. ՅԱՐՈՍԼԱՎԿԱԿԻ.—Ստալինյան յերրորդ հնգամյակում կոմունիստական դաստիարակության մասին, ժուռնալ «Պարահինոյերի ստրուտելու», 1939 թ., № 11, եջ 30-35:

Ս. ՊԻՉՈՒԳԻՆ.—Աշխատավորների կոմունիստական դաստիարակության վճռողական նշանակության մասին, ժուռնալ «Պոդարկա» 1939 թ., № 4, եջ 40-54:

Գ. ԱԼԵԿՍԱՆԴՐՈՎ, ՅԵՄ. Գ. ՎԱՍԵԼԻԿԻ.—Մարդկանց — կոմունիզմը կառուցողների գիտակցության մեջ կապիտալիզմի մը-

նացուկների հաղթահարման մասին (կոնսուլտացրայ), ժուռնալ «Բոլշևիկ», 1939 թ., № 4, եջ 76-80:

Վ. ԿՈՂԲԱՆՈՎԱԿԻ.—Խնչումն են կայանում կապիտալիզմի մնացուկները մարդկանց գիտակցության մեջ, ժուռնալ «Վ. պոմոցը պարտիինոյ ուշութեա», 1939 թ., № 13, եջ 3-4:

Ֆ. ՈՂԵՇԶՈՒԻԿ.—Մասսաների կոմունիստական դաստիարակությունը և կրօնական մնացուկների հաղթահարմը, ժուռնալ «Բոլշևիկ», № 9, եջ 38-48:

Վ. ԿՈՂԲԱՆՈՎԱԿԻ.—Կոմունիստական բարոյականության հարցերը, ժուռնալ «Բոլշևիկ», 1939 թ., № 15-16, եջ 95-108:

Ե. ՄԻՏԿՈՎԱԿԻԿԻ—Անձնական և հանրային շահը սոցիալիստական հասարակության մեջ, ժուռնալ «Պոդարկա» 1939 թ., № 7, եջ 1-17:

Դ. ՇԵՓԻԼՈՎ.—Սոցիալիստական սեփականությունը կոլխոզային կարգերի հիմքն և, ժուռնալ «Բոլշևիկ», 1939 թ., № 11-12, եջ 69-83:

Ս. ԲԱՏԻՇԶԵՎ.—Սոցիալիզմի ժամանակ ամուսնության լեկը ընտանիքի մասին, «Պրավդա» 1939 թ., ոգոստոսի 26-ին, եջ 4:





44 755

а р б

И. ТУГАРИНОВ
КОММУНИСТИЧЕСКОЕ ВОСПИТАНИЕ
ТРУДЯЩИХСЯ и ЗАДАЧИ СТЕННЫХ
ГАЗЕТ
